

Գլուխ տասնվեց

Այդ ընթացքում՝ մինչ 1916թ-ի նոյեմբեր ամիսը, Ռուսաստանում ռազմական իրավիճակը սկսել էր ավելի մոայլ պատկեր ենթադրել: Մինչ այդ մեզնից շատերը ինչ-որ հրաշքով զերծ էին մնացել “իրադարձություններ”-ից: Իսկ այժմ արդեն “իրադարձությունները” մոտենում էին մեզ, կարել է ասել՝ դրանք մոտենում էին մեզնից յուրաքանչյուրին անհատապես, և մենք այլևս չէինք կարող խուսափել դրանք նկատելուց:

Նկարագրելը կամ վերլուծելը, թե ինչ էր կատարվում այդ ժամանակ ոչ մի կապ չունի իմ առաջադրանքի հետ: Միևնույն ժամանակ այնքան բացառիկ ժամանակահատված էր, որ չեմ կարող միանգամայն խուսափել կամ ճնշել, թե ինչ էր կատարվում մեր շուրջ, հակառակ դեպքում պետք է ուղակի ընդունեմ, որ պարզապես կույր ու համր եմ եղել: Բացի այդ, ոչինչ չի կարող ավելի լավ նյութ ծառայել իրադարձությունների “մեխանիկական” բնույթը ցույց տալու համար՝ այն է՝ կամք հասկացության լիովին և ամբողջական բացակայությունը, քան այս ընթացքի իրադարձությունները քննելը: Թվում էր, թե որոշ բաներ կախված են ինչ-որ մեկի կամքից, բայց նույնիսկ սա էր պատրանք, և իրականում երբեք այդքան հստակ չի եղել, որ ամեն ինչ *տեղի է ունենում*, բայց ոչ ոք ոչինչ *չի անում*:

Առաջին հերթին, բոլորին, ով ի վիճակի էր տեսնել կամ ցանկություն ուներ տեսնելու, պարզ էր, որ պատերազմը ինքն իրեն մոտենում էր իր ավարտին՝ շնորհիվ ինչ-որ խորը, ներքին ձանձրույթի և այս ամբողջ սարսափի չնայած բուրբ ու անորոշ, սակայն ամուր արմատացած անիմաստության: Ոչ ոք այժմ չէր հավատում ոչ մի խոսքի: Պատերազմը գալվանացնելու արդեն ոչ մի փորձ չէր կարող հանգեցնել ինչ-որ բանի: Միևնույն ժամանակ անհնար էր կանգնեցնել ինչ-որ բան, և պատերազմը շարունակելու անհրաժեշտության մասին կամ պատերազմը դադարացնելու անհրաժեշտության մասին բոլոր խոսակցությունները պարզապես ցույց էին տալիս մարդկային ուղեղի անօգնականությունը, որը նույնիսկ ի վիճակի չէր գիտակցելու իր իսկ սեփական անօգնականությունը: Երկրորդ հերթին, միանգամայն պարզ էր, որ սնանկացում էր սպասվում: Եվ պարզ էր, որ ոչ ոք չէր կարող կանգնեցնել որևէ բան կամ շեղել իրադարձությունները կամ տանել դրանք ավելի ապահով ուղղությամբ: Ամեն ինչ ընթանում էր այն միակ ճանապարհով, որով կարող էր ընթանալ և չէր կարող ընթանալ որևէ այլ ճանապարհով: Այս ընթացքում ես հատկապես ցնցված էի ձախակողմյան քաղաքական գործիչների ընդունած դիրքով, ովքեր մինչ այդ պասիվ դեր էին խաղում, սակայն այժմ պատրաստվում էին ստանձնել ակտիվ դեր: Ավելի ճիշտ՝ նրանք ներկայացան որպես ամենակույր և ամենից քիչ պատրաստված և ամենաանկարողը՝ հասկանալու այն, ինչ իրենք իրականում անում էին, ուր էին նրանք գնում, ինչ էին պատրաստում, նույնիսկ իրենք իրենց համար:

Ես այնքան լավ եմ հիշում Լենինգրադը՝ իր կյանքի վերջին ձմռանը: Ո՞վ կարող էր այդ ժամանակ իմանալ կամ նույնիսկ ենթադրել վատագույնը, որ սա քաղաքի վերջին ձմեռն էր: Բայց չափազանց շատ մարդիկ էին ատում այս քաղաքը, և շատերն էլ վախենում էին, և քնրա վերջին օրերը հաշվարկված էին:

Մեր հանդիպումները շարունակվում էին: 1916թ.-ի վերջին ամիսների ընթացքում Գ.-ն չեկավ Լենինգրադ, բայց մեր խմբի անդամներից ոմանք գնացին Մոսկվա և իրենց հետ բերեցին նոր սխեմաներ ու որոշ նշումներ, որոնք արվել էին Գ.-ի Մոսկվայի ուսանողների կողմից՝ իր հրահանգներով:

Այս ընթացքում շատ նոր մարդիկ հայտնվեցին մեր խմբերում, և չնայած պարզ էր, որ ամեն ինչ ինչ-որ անհասկանալի ավարտ է ունենալու, Գ.-ի համակարգը մեզ վստահության և ապահովության որոշակի զգացողություն էր փոխանցել: Այս ժամանակ մենք հաճախ խոսում էինք այն մասին, թե ինչպես էինք մեզ զգալու այս քառսային վիճակում, եթե չլինեք այս համակարգը, որը ավելի ու ավելի էր դառնում մերը: Այժմ մենք չէինք կարող պատկերացնել՝ ինչպես կարող էինք ապրել առանց դրա և գտնել մեր փրկության ճանապարհը գոյություն ունեցող հակադրությունների այս լաբիրինթում:

Այս ժամանակահատվածը խորհրդանշում է Նոյան Տապանի մասին խոսակցությունների սկիզբը: Ես միշտ Նոյան Տապանի միջոցով համարել եմ էզոթերիկ ալեգորիա: Մեզնից շատերը այժմ սկսել էին տեսնել, որ այս միջոցով միանգամայն էզոթերիկով ընդհանուր գաղափարի ալեգորիա չէր, բայց միևնույն ժամանակ այն էզոթերիկ աշխատանքի պլան էր՝ ներառելով մեր սեփականը: Համակարգը, ինքնին, “տապան” էր, որում մենք կարող էինք հույս ունենալ փրկել ինքներս մեզ “ջրհեղեղի” ժամանակ:

Գ.-ն ժամանեց միայն 1917թ.-ի փետրվարի սկզբին: Առաջին խոսակցություններից մեկի ժամանակ նա մեզ ցույց տվեց միանգամայն նոր մոտեցում այն ամենի նկատմամբ, ինչի մասին մինչ հիմա խոսել էր:

“Մինչ այժմ, - ասեց նա, - մենք դիտել ենք ‘ջրածինների աղյուսակը’՝ որպես տատանումների աղյուսակ և նյութերի տեսակարար կշռի, որոնք հակադիր համակցության մեջ են միմյանց նկատմամբ: Այժմ մենք պետք է գիտակցենք, որ տատանումների և նյութերի տեսակարար կշռը արտահայտում են նաև այլ նյութական հատկանիշներ: Օրինակ, մինչ այժմ մենք ոչինչ չենք նշել նյութի *կարողության* կամ նյութի գիտակցության մասին: Մինչդեռ նյութի տատանումների արագությունը ցույց է տալիս տվյալ նյութի կարողության աստիճանը: Դուք պետք է հիշեք, որ բնության մեջ ոչինչ մեռած կամ անշունչ չէ: Ամեն ինչ կենդանի է իր իսկ ձևով, ամեն ինչ իր իսկ ձևով ընդունակ է և գիտակից: Միայն այս գիտակցությունը և կարողությունը արտահայտվում է տարբեր կերպ գոյության տարբեր մակարդակներում՝ այն է՝ տարբեր կշռանժարներով: Բայց պետք է հասկանալ մեկընդմիջտ և ամեն ինչի համար, որ բնության մեջ չկա անկենդան կամ անշունչ ոչինչ, պարզապես կենդանության տարբեր աստիճաններ կան:


“Ջրածինների աղյուսակը՝ նյութի խտությունը և տատանումների արագությունը որոշելու փոխարեն ծառայում է միևնույն ժամանակ որոշելու գիտակցության աստիճանը որոշելու, քանի որ վերջինս համապատասխանում է խտության կամ տատանումների արագությանը: Սա նշանակում է՝ որքան խիտ է նյութը, այնքան այն ավելի քիչ գիտակից է, և ավելի քիչ ընդունակ: Եվ որքան ավելի խիտ են տատանումները, այնքան ավելի գիտակից և ընդունակ է նյութը:

Իսկապես, նյութը մահանում է, երբ դադարում են տատանումները: Սակայն երկրի վրա կյանքի սովորական պայմաններում, մենք գործ չունենք մեռած իրերի հետ: Եվ գիտությունը չի կարող գտնել այն: Բոլոր նյութերը, որ մենք գիտենք, կենդանի են և իրենց սեփական ձևի մեջ դրանք ընդունակ են:

Նյութի տեսակարար կշռի աստիճանը որոշելու ժամանակ 'ջրածինների աղյուսակը' այսպիսով որոշում է նաև կարողության աստիճանը: Սա նշանակում է, որ 'ջրածինների աղյուսակում' տարբեր տեղեր զբաղեցրած նյութերի միջև համեմատություններ անելով, մենք որոշում ենք ոչ միայն դրանց խտությունը, այլև դրանց կարողունակությունը: Եվ մենք չենք կարող ասել, թե այս կամ այն 'ջրածինը' քանի անգամ է ավելի խիտ կամ ավելի թեթև մյուսից, բայց մենք կարող ենք ասել, թե քանի անգամ է մի 'ջրածինը' ավելի կարողունակ մյուսից:

'Ջրածինների աղյուսակի' կիրառումը, որն օգտագործվում է շատ ջրածիններից կազմված իրերի և կենդանի էակների տարբեր հատկությունները որոշելու համար, հիմնված է այն սկզբունքի վրա, որ ամեն կենդանի էակի կամ ամեն ինչի մեջ կա մեկ որոշակի 'ջրածին', որը հանդիսանում է ձգողականության կենտրոնը. այն է՝ տվյալ էակը կամ իրը կազմող բոլոր 'ջրածինների' 'միջին ջրածինը': Այս 'միջին ջրածինը' գտնելու համար, սկզբի համար, մենք կսկսենք խոսել ապրող էակներից: Առաջին հերթին պետք է իմանալ քննվող կենդանի էակի գոյության աստիճանը: Գոյության աստիճանը, իսկզբանե, որոշվում է տվյալ համակարգում գոյություն ունեցող մակարդակներով: Մինչ այժմ մենք միայն խոսել ենք մարդու մասին: Մարդուն ընկալել ենք՝ որպես երեք մակարդակով համակարգ: Մենք չենք կարող միևնույն ժամանակ խոսել և մարդու, և կենդանիների մասին, քանի որ կենդանիները հիմնովին տարբերվում են մարդուց: Ամենաբարձր մակարդակի կենդանին, որ մենք գիտենք, բաղկացած է երկու մակարդակներից, իսկ ամենացածրը՝ մեկ՝:

Գ.-ն գծագիր գծեց:



“Մարդը բաղկացած է երեք մակարդակներից:

Ոչխարը բաղկացած է երկու մակարդակներից:

Որդը բաղկացած է միայն մեկ մակարդակից:

Միևնույն ժամանակ մարդու միջին մակարդակը հավասարագոր է ոչխարի, և վերջինը՝ որդի մակարդակներին: Այսպիսով, կարելի է ասել, որ մարդը բաղկացած է մարդուց, ոչխարից և որդից, ոչխարը բաղկացած է ոչխարից և որդից:

Մարդը բարդ էակ է; նրա գոյության մակարդակը որոշվում է այն էակների գոյության մակարդակի որոշմամբ, որոնցից, որ նա բաղկացած է: Ոչխարը և որդը կարող են մեծ և փոքր դեր խաղալ մադրու մեջ: Այսպիսով, որդը մեծ դեր է խաղում առաջին մակարդակի մարդու համար, երկրորդ մակարդակի մարդու համար՝ ոչխարը, իսկ երրորդ մակարդակի համար՝ մարդը: Սակայն այս սահմանումները կարևոր են միայն որոշակի դեպքերում: Ընդհանուր առմամբ մարդը սահմանվում է համաձայն միջին մակարդակի ձգողականության կենտրոնի:

Մարդու միջին մակարդակի ձգողականության կենտրոնը 'ջրածին' 96-ն է: 'Ջրածին' 96-ի կարողունակությունը որոշում է 'մարդու' միջին ընդունակությունը. այն է՝ մարդու ֆիզիկական մարմինը: 'Աստղային մարմնի' ձգողականության կենտրոնը 'ջրածին' 48-ն է: Երրորդ մարմնի ձգողականության կենտրոնը 'ջրածին' 24-ն է, և չորրորդ մարմնի ձգողականության կենտրոնը 'ջրածին' 12-ն է:

Գ.-ն գծեց այս աղյուսակը.

48	24	12	6
96	48	24	12
192	96	48	24

Վերին մակարդակի ձգողականության ուժի կենտրոնը միայն մեկ 'ջրածնով' է բարձր միջին մակարդակի ձգողականության ուժի կենտրոնից: Եվ միջին մակարդակի ձգողականության ուժի կենտրոնը մեկ 'ջրածնով' է բարձր ստորին մակարդակի ձգողականության կենտրոնից:

“Բայց ինչպես արդեն ասեցի, գոյության մակարդակը 'ջրածնային աղյուսակով' որոշելու համար, սովորաբար կիրառվում է միջին մակարդակը:

Սա ընդունելով որպես հենակետ՝ հնարավոր է լուծել այնպիսի խնդիրներ, ինչպիսին են օրինակ.

Եկեք պատկերացնենք Հիսուս Քրիստոսը ութերորդ տեսակի մարդ է. քանի անգամ է Հիսուս Քրիստոսը ավելի ընդունակ, քան օրինակ՝ սեղանը:

Սեղանը չունի ոչ մի մակարդակ: Այն գտնվում է 'ջրածիններ' 1536-ի և 3072-ի միջև՝ ըստ 'ջրածինների աղյուսակի' երրորդ սանդղակի: Ութերորդ կարգի մարդը պատկանում է 'ջրածին' 6-ին: Սա է ութերորդ կարգի մարդու միջին մակարդակի ձգողականության կենտրոնը: Եթե մենք կարողանանք հաշվարկել քանի անգամ է 'ջրածին' 6-ը ավելի կարողունակ 'ջրածին' 1536-ի հետ համեմատած, այդ դեպքում կարող ենք պարզել քանի անգամ է ութերորդ կարգի մարդը ավելի կարողունակ, քան սեղանը: Բայց այս դեպքում պետք է հիշել, որ գիտակցությունը որոշվում է ոչ թե նյութի խտությամբ, այլ տատանումների խտությամբ:

Եթե հնարավոր լինի իմանալ այս աճի ճշգրիտ գործակիցը, այդ դեպքում հնարավոր կլինի լուծել այդ խնդիրը: Ես միայն ուզում եմ ապացուցել, որ ինչքան էլ տարօրինակ լինի, միևնույնն է հնարավոր է լուծել այդ խնդիրը:

Կապված նրա հետ, թե ինչ էս նոր ասեցի, անհրաժեշտ է, որ դուք նաև հասկանաք դասակարգման սկզբունքները և ապրող էակների սահմանումները տիեզերական տեսակետից՝ իրենց տիեզերական գոյության տեսակետից: Սովորական գիտության մեջ դասակարգումն արվում է ըստ արտաքին հատկանիշների, այն է՝ ոսկորներ, ատամներ, գործառույթներ; կաթնասուն կենդանիներ, ողնաշարավորներ, կրծողներ և այլն, ճշգրիտ գիտության մեջ դասակարգումն արվում է՝ ըստ դրանց տիեզերական հատկանիշների: Փաստացի գոյություն ունեն ճշգրիտ հատկանիշներ՝ նույնական բոլոր ապրող օրգանիզմների համար, որոնք թույլ են տալիս մեզ սահմանել տվյալ էակի կարգն ու տեսակը առավելագույն ճշգրտությամբ՝ թե այլ էակների հետ հարաբերության մեջ, թե տիեզերքում իր զբաղեցրած ուրույն տեղում:

Այս հատկանիշները գոյության հատկանիշներն են: Ամեն ապրող էակի գոյության տիեզերական մակարդակը որոշվում է հետևյալ կերպ.

Առաջին հերթին, ըստ նրա, թե ինչ է ուտում այս էակը,

Երկրորդ հերթին՝ ինչ է շնչում և

Երրորդ հերթին՝ ապրելու միջին տևողությամբ:

Մրանք են գոյության տիեզերական երեք հատկանիշները:

Օրինակ, եկեք դիտարկենք մարդուն: Նա սնվում է 'ջրածին' համար 768-ով, շնչում է 'ջրածին' համար 192, և ապրում է 'ջրածին' 192-ում: Մեր մոլորակի վրա մարդու նման այլ տեսակի կենդանի էակ գոյություն չունի: Չնայած, որ կան էակներ, որոնք ավելի բարձր մակարդակի վրա են, քան մարդը: Կենդանիները, ինչպես օրինակ շունը, կարող է սնվել 'ջրածին' 768-ով, բայց այս կենդանիները կարող են նաև սնվել ավելի ցածր 'ջրածնով'՝ ոչ 768-ով, այլ՝ մոտ 1536-ին՝ սնունդ, որը կիրառելի չէ մարդու համար: Մեղուն սնվում է 'ջրածնով', որն ավելի բարձր մակարդակի վրա է, քան 768-ը, նույնիսկ ավելի բարձր քան 384-ը, բայց այն ապրում է փեթակում՝ մի միջավայրում, որտեղ մարդը ի վիճակի չէր լինի ապրել: Առերևույթ, մարդը կենդանի է: Բայց մարդը տարբեր է բոլոր մյուս կենդանիներից:

Եկեք քննարկենք մեկ այլ օրինակ՝ այլուրի որդ: Այն սնվում է այլուրով՝ 'ջրածին', որն ավելի կոպիտ է, քան 'ջրածին' 768-ը, քանի որ որդը կարող է նաև ապրել փչացած այլուրով: Եկենք ընդունենք, որ սա նույնպես համար 1536-ն է: Այն շնչում է 'ջրածին' 192 և ապրում 'ջրածին' 1536-ով:

Չուկը սնվում է 'ջրածին' 1536-ով, ապրում 'ջրածին' 384-ով և շնչում 'ջրածին' 192:

Ծառը սնվում է 'ջրածին' 1536-ով, շնչում մասամբ 'ջրածին' 192 և մասամբ 'ջրածին' 96, և ապրում կիսով չափ 'ջրածին' 192-ով և կիսով չափ 'ջրածին' 3072-ով (հող):

Եթե փորձենք շարունակել այս սահմանումները, կտեսնենք, որ այս պլանը, որը այդքան պարզ է թվում առաջին հայացքից, հնարավոր է դարձնում որոշել ամենաաննկատ տարբերությունները ապրող էակների կարգերի միջև, հատկապես, եթե հաշվի առնենք, որ 'ջրածիններն' ընկալվում են որպես օկտավաներ, շատ լայն հասկացություններ են:

Այժմ, եթե նաև գիտակցենք, որ այս նյութերը իրենց հերթին բաժանվում են որոշակի դասերի, արդեն կկարողանանք տեսնել ավելի ճշգրիտ սահմանումների հնարավորությունները: Մա միանգամայն նույնն է թե օդի և թե ապրելու միջին տևողության համար:

Գոյության այս տիեզերական հատկանիշները անմիջականորեն կապված են գիտակցության սահմանման հետ՝ համաձայն 'ջրածինների աղյուսակի':

Նյութի գիտակցությունը որոշվում է այն էակով, որի համար այն որպես սնունդ է ծառայում: Օրինակ՝ ո՞րն է ավելի խելամիտ այս տեսանկյունից՝ հում կարտոֆիլը, թե՞ խաշած կարտոֆիլը: Հում կարտոֆիլը կարող է սնունդ ծառայել խոզերի համար, մինչդեռ խաշած կարտոֆիլը կարող է սնունդ ծառայել մարդու համար: Խաշած կարտոֆիլը ավելի խելամիտ է, քան հումը:

Եթե դասակարգման և սահմանման այս սկզբունքները ճիշտ ընկալվեն, շատ բաներ կդառնան պարզ և հասկանալի: Ոչ մի ապրող էակ չի կարող իր ցանկությամբ փոխել իր սնունդը, կամ իր շնչած օդը, կամ ապրելու իր միջին տևողությունը: Ցանկացած ապրող օրգանիզմի տիեզերական կարգը որոշում է վերջինիս սնունդը, ինչպես նաև օդը, որով այն շնչում է և միջին տևողությունը, որը նա ապրում է:

Նախկինում, երբ խոսում էինք սննդի օկտավաների մասին իր երեք մակարդակներից բաղկացած համակարգում, մենք նկատեցինք, որ բոլոր օգտակար ‘ջրածինները’, որոնք անհրաժեշտ են աճի, օրգանիզմի էվոլյուցիայի համար բաղկացած են սննդի երեք տեսակներից, այն է՝ ուտելիքից՝ բառի բուն իմաստով՝ ուտելի և խմելի, օդից, որը մենք շնչում ենք և տպավորություններից: Հիմա եկեք ենթադրենք, որ կարող ենք բարելավել սննդի և օդի որակը, օրինակ՝ սնվենք ‘ջրածին’ 384-ով 768-ի փոխարեն և շնչենք ‘ջրածին’ 96, 192-ի փոխարեն: Ինչքան ավելի պարզ և հեշտ կդառնար օրգանիզմում օգտակար նյութերի արտադրությունը: Բայց ամբողջ իմաստն այն է, որ սա անհնար է: Օրգանիզմը ադապտացվել է այս կոշտ նյութերը վերափոխելու օգտակար նյութերի, և եթե նրան տալ օգտակար նյութեր կոշտ նյութերի փոխարեն, այն ի վիճակի չի լինի վերափոխել դրանք և շատ շուտով կմահանա: Ոչ օդը, ոչ էլ սնունդը հնարավոր չէ փոխել: Սակայն տպավորությունները, սրանք փոփոխելու հատկանիշները տրված են մարդուն, և ենթակա չեն տիեզերական օրենքին: Մարդը չի կարող բարելավել իր սնունդը, չի կարող բարելավել օդը: Բարելավումը այս դեպքում իրականում ամեն ինչ ավելի կբարդացնեն: Օրինակ, ‘ջրածին’ 96-ը 192-ի փոխարեն կամ շատ նոսր օդ կլինեն կամ շատ շիկացած գազերից բաղկացած օդ, որը մարդը չի կարող շնչել. կրակը ‘ջրածին’ 96 է: Ճիշտ նույնը վերաբերում է ուտելիքին: ‘Ջրածին’ 384-ը ջուր է: Եթե մարդը բարելավելու լինեն իր սնունդը, նշանակում է պետք է սնվեր ջրով և շնչեր կրակ: Պարզ է, որ սա անհնար է: Բայց մինչդեռ մարդը չի կարող բարելավել իր սնունդն ու օդը, նա կարող է բարելավել իր տպավորությունները և հասցնել դրանք շատ բարձր մակարդակի, և այս միջոցով իր օրգանիզմը ներառել օգտակար ‘ջրածիններ’: Ճիշտ սրա վրա է հիմնաված էվոլյուցիայի հնարավորությունը: Մարդը պարտավոր չէ սնվել H48 ջրածնով, նա կարող է օգտվել թե H24, H12 և թե H6, անգամ H3-ից: Սա փոխում է ամբողջ պատկերը, և այն մարդը, որ ստեղծում է ավելի բարձր ջրածիններ իր մեքենայի ավելի բարձր մակարդակների համար, անպայման տարբերվում է նրանից, որ սնվում է ավելի ցածր մակարդակի ջրածնով:

Զրույցների ընթացքում Գ.-ն ևս մեկ անգամ անդրադարձավ դասակարգմանը՝ ըստ տիեզերական հատկանիշների:

“Գոյություն ունի նաև համակարգերի այլ դասակարգում, - ասեց նա, - որը նույնպես պետք է հասկանաք: Այս դասակարգումը ամբողջովին տարբերվում է օկտավաների տարբեր հարաբերակցությունից: Առաջին դասակարգումը՝ ըստ ‘սննդի’, ‘օդի’ և ապրելու միջին տևողության, վերաբերում է “կենդանի էակներ”՝ ինչպես մենք անվանում ենք նրանց, ներառյալ բույսերը. այսպես ասած՝ վերաբերում է անհատներին: Մյուս դասակարգումը, որի մասին այժմ պետք է խոսեն, ավելի հեռու է գնում, քան այն, ինչ ասել է՝ “կենդանի էակներ”՝ թե ավելի վեր, քան կենդանի էակները, թե ավելի ցածր ապրող էակներից, և այն առնչվում է ոչ թե անհատների հետ, այլ ընդհանուր դասերի հետ՝ վերցված ավելի մեծ մասշտաբով: Այս ամբողջ դասակարգման հիմքում այն փաստն է, որ բնության մեջ չկան բաց թողումներ: Բնության մեջ ամեն ինչ միմյանց հետ փոխկապակցված է, և ամեն ինչ կենդանի է: Այս դասակարգման սխեման կոչվում է “Ամեն ինչ կենդանի է” սխեմա:

Համաձայն այս սխեմայի՝ ամեն տեսակի էակ, գոյության ամեն աստիճան, սահմանվում է ըստ այն բանի, թե ինչն է որպես սնունդ ծառայում այս տեսակի էակին կամ այդ աստիճանի վրա գտվող գոյությանը, և նաև՝ թե ինչին են իրենք ծառայում որպես

սնունդ, քանի որ ըստ տիեզերական օրենքի՝ էակների ամեն դաս սնվում է իրենից ցածր որոշակի այլ դասով, և ինքը ծառայում է՝ որպես սնունդ իրենց բարձր մակարդակի վրա գտնվող էակների համար”:

Գ.-ն մի աղյուսակ գծեց, որն ուներ աստիճանի տեսք և բաղկացած էր 11 վանդակներից: Եվ ամեն վանդակում՝ բացի վերևի երկուսից, նա երեք շրջանակ գծեց, որոնց մեջ էլ թվեր: (Տես՝ Գծ. 58)

“Ամեն վանդակ խորհրդանշում է գոյության մի մակարդակ, - ասեց նա: Ներքևի շրջանակի մեջ գտնվող ‘ջրածինը’ ցույց է տալիս, թե տվյալ դասի էակները ինչով են սնվում: Վերևի շրջանակի ‘ջրածինը’ ցույց է տալիս այն դասի էակներին, որոնց համար վերջինս սնունդ է հանդիսանում: Եվ միջին շրջանակի մեջ գտնվող ‘ջրածինը’ ցույց է տալիս այս դասի միջինը խորհրդանշող ‘ջրածինին’՝ ցույց տալով, թե ինչ են իրենցից ներկայացնում այս էակները:

Մարդու տեղը այս աղյուսակում յոթերորդ վանդակն է ներքևից կամ հինգերորդը՝ վերևից: Ըստ այս աղյուսակի՝ մարդը ‘ջրածին’ 24 է, նա սնվում է ‘ջրածին’ 96-ով, և ինքը սնունդ է ծառայում ‘ջրածին’ 6-ի համար: Մարդուց ներքև գտնվող վանդակին պատկանում են ողնաշարավորները, դրան կից՝ անողնաշարավորները: Անվողնաշարավորները ‘ջրածին’ 96 են: Համապատասխանաբար մարդ սնվում է անողնաշարավորներով:

Այս պահին հակասություններին ուշադրություն մի դարձրեք, այլ փորձեք հասկանալ, թե ինչ կարող է սա նշանակել: Եվ հավասարապես, մի համեմատեք այս աղյուսակը այլ աղյուսակների հետ: Մենդի աղյուսակի համաձայն՝ մարդը սնվում է ‘ջրածին’ 768-ով, իսկ ըստ այս սխեմայի՝ ‘ջրածին’ 96-ով: Ինչու՞: Ի՞նչ է դա նշանակում: Ե՛վ սա, և՛ մյուսը ճիշտ են: Ավելի ուշ, երբ հասկանաք սրա իմաստը, դուք երկուսն էլ կմիացնեք իրար և կդառնա մեկ ընդհանուր: Հաջորդ ստորին վանդակը բույսերն են: Հաջորդը՝ հանքանյութերը, հաջորդը՝ մետաղներ, որոնք առանձին տիեզերական խումբ են կազմում հանքանյութերի շարքում, հաջորդ վանդակը մեր լեզվում անվանում չունի: Այդ վանդակը առնչվում է Բացարձակի հետ: Հիշում եք, երբ խոսում էինք “Կայուն սրբության” մասին: Դա է “Կայուն սրբությունը”:

Վերջին վանդակի ներքևի մասում նա մի փոքրիկ եռանկյունի գծեց՝ սուր անկյունը դեպի ներքև:

Մարդու վանդակի մյուս կողմում գտնվում է 3, 12 և 48 ‘ջրածիններ’ պարունակող վանդակը: Սա այնպիսի էակների դաս է կազմում, որոնց մասին մենք չգիտենք: Եկենք անվանենք դրանք ‘հրեշտակներ’: Հաջորդ վանդակը՝ 1, 6, 24-ն է, եկենք անվանենք այս էակներին ‘հրեշտակապետեր’:

Հաջորդ վանդակում նա գրեց 3 և 12 և գծեց երկու շրջան՝ նշելով ամեն մեկի կենտրոնը և անվանեց դա “Հավերժ Անփոփոխ”, և մյուս վանդակում գրեց 1-ն ու 6-ը, մի շրջան գծեց մեջտեղում, իսկ այս շրջանի ներսում էլ՝ մի եռանկյունի, որն իր մեջ ներառում էր մեկ այլ շրջան, բաց թողնված

“Այս աղյուսակը առաջին հայացքից այդքան էլ հասկանալի չի լինի ձեզ համար”, - ասեց նա:

“Բայց աստիճանաբար կկարողանաք այն կիրառել: Միայն մի որոշ ժամանակ պետք է կարողանաք այն ամեն ինչից առանձին պատկերել”:

Սա այն ամենն էր, ինչ լսել եմ Գ.-ից այս տարօրինակ աղյուսակի վերաբերյալ, ինչն էլ իրականում հիասթափեցրեց մեզ շատ բաներից, որոնց մասին ասվել էր ավելի վաղ:

Այս աղյուսակի մասին մեր խոսակցություններում մենք շուտով որոշեցինք “հրեշտակները” ընդունել որպես մոլորակներ, իսկ “հրեշտակապետերին”՝ որպես արևներ: Շատ այլ բաներ աստիճանաբար սկսեցին ավելի պարզ դառնալ մեզ համար: Մեզ չափազանց շփոթեցնում էր ‘ջրածին’ 6144-ի ներկայությունը, որն իսկզբանե բացակայել է ‘ջրածինների’ նախկին սխեմայում, որն ավարտվում էր ‘ջրածին’ 3072-ով: Միննույն ժամանակ Գ.-ն նշեց, որ ‘ջրածինների’ հաշվարկումն արվել է համաձայն ջրածինների երրորդ մակարդակի:

Երկար ժամանակ անց ես հարցրեցի նրան, թե ինչ է այս ամենը նշանակում:

“Դա անավարտ ջրածին է, - ասեց նա: ‘Ջրածին’՝ առանց Սուրբ հոգու: Այն պատկանում է նույն՝ այն է՝ երրորդ մակարդակին, սակայն ավարտված չէ:

Յուրաքանչյուր լիարժեք ‘ջրածին’ բաղկացած է ‘ածխածնից’, ‘թթվածնից’ և ‘ազոտից’: Հիմա արի քննարկենք երրորդ մակարդակի վերջին ջրածինը՝ ‘ջրածին’ 3072: Այս ‘ջրածինը’ բաղկացած է ‘ածխածին’ 512-ից, ‘թթվածին’ 1536-ից և ‘ազոտ’ 1024-ից:

“Եկեք շարունակենք. հաջորդ եռյակում ազոտը վերածվում է ածխածնի, սակայն թթվածին չկա դրա համար և չկա ազոտ: Այսպիսով, խտանալու արդյունքում այն ինքն իրեն վերածվում է ‘ջրածին’ 6144-ի, սակայն այն արդեն *մահացած ջրածին է* և այլևս հետագայում ինչ-որ այլ բանի վերածվելու հնարավորությունից զուրկ՝ ‘ջրածին’, առանց Սուրբ հոգու”:

Սա Գ.-ի վերջին այցելությունն էր Լենինգրադ: Ես փորձեցի խոսել նրա հետ սպառնացող իրադարձությունների մասին: Սակայն նա կոնկրետ ոչինչ չասեց, որի վրա ես կարող էի հիմնավորել իմ սեփական հետագա քայլերը:

Նրա մեկնելու հետ կապված մի շատ հետաքրքիր դեպք տեղի ունեցավ: Սա կատարվեց կայարանում: Մենք բոլորս ճանապարհում էինք նրան Նիկոլայնսկիի կայարանում: Գ.-ն կանգնած մեզ հետ էր խոսում հարթակի վրա՝ վագոնի կողքը կանգնած: Նա այն սովորական Գ.-ն էր, որին մենք բոլորս ճանաչում ենք: Երկրորդ զանգից հետո նա ներս մտավ վագոն (նրա նստատեղը դռան մոտ էր) և մոտեցավ պատուհանին:

Այս անգամ նա տարբեր էր: Պատուհանից մենք այլ մարդու տեսանք, ոչ թե այն մարդուն, ով մտավ գնացք: Նա փոխվել էր այդ մի քանի վարկյանների ընթացքում: Շատ դժվար է բացատրել, թե որն էր տարբերությունը, սակայն հարթակի վրա նա սովորական մարդ էր՝ ինչպես բոլոր մնացածը, իսկ վագոնից արդեն բնավ այլ մարդ էր մեզ նայում, միանգամայն բացառիկ կարևորությամբ և արժանապատվությամբ ամեն մի հայացքի և շարժման մեջ՝ ասես մի անհայտ թագավորության արքայազն կան նահանգապետ լինել, ում մենք ճանապարհում էինք իր թագավորություն:

Մեզնից շատերը այդ պահին չէին հասկանում՝ ինչ էր կատարվում, բայց նրանք զգում էին և էմոցիոնալ կերպով վերապրում այն, ինչ դուրս էր երևույթների սովորական ընթացքից: Այս ամենը տևեց ընդհամենը մի քանի վարկյան: Երրորդ զանգը կարճեն անմիջապես հաջորդեց երկրորդ զանգին, և գնացքը շարժվեց:

Ես չեմ հիշում՝ ով էր առաջինը, որ խոսեց Գ.-ի այս “վերափոխման” մասին, երբ մենք արդեն մենակ էինք, և այդ ժամանակ պարզվեց, որ մենք՝ բոլորս էլ տեսել ենք դա՝ չնայած,

որ հավասարապես չենք հասկացել, թե դա ինչ էր, երբ այն տեղի էր ունենում: Բայց բոլորս, առանց բացառության, զգացել էին ինչ-որ անսովոր երևույթ:

Գ.-ն ավելի վաղ մեզ բացատրել էր, որ եթե որևէ մեկը վարժվի քանդակագործության արվեստում, ապա ամբողջովին կկարողանա փոխել իր տեսքը: Նա ասել էր, որ մարդ կարող է դառնալ գեղեցիկ կամ սարսափելի, մարդ կարող է ստիպել մյուսներին նկատել իրեն կամ կարող է պարզապես դառնալ *անտեսանելի*:

Ի՞նչ էր սա: Միգուցե սա հենց այդ “քանդակագործության” դեպքն էր:

Բայց պատմությունը դեռևս ավարտված չէ: Գ.-ի հետ գնացքում ճամփորդում էր նաև Ա.-ն՝ շատ հայտնի լրագրող, ով այդ ժամանակ աքտրվում էր Լենինգրադից (սա հենց հեղափոխությունից առաջ էր): Մինչդեռ մենք Գ.-ին էինք ճանապարհում, մենք կանգնած էինք վագոնի այս մի ծայրում, մինևույն ժամանակ՝ վագոնի մյուս ծայրում, մեկ այլ խումբ էր կանգնած, որ ճանապարհում էր Ա.-ին:

Ես ինքս անձամբ ճանաչում էին Ա.-ին, սակայն նրան ճանապարհող մարդկանց շարքում մի քանի ծանոթներ ունեի, նույնիսկ մի քանի ընկերներ. նրանցից երկուսը, թե երեքը ներկա էին եղել մեր հանդիպումներին, և նրանք գնում էին մի խմբից մյուսը:

Մի քանի օր հետո այն թերթը, որը Ա.-ն ներակայացնում էր, հանդես եկավ մի հոդվածով՝ վերնագրված “Ճանապարհին”, որում Ա.-ն նկարագրել էր Լենինգրադից Մոսկվա ճանապարհորդության ժամանակ իր ունեցած մտքերն ու տպավորությունները: Մի անձանոթ արևելցի էր ճանապարհորդում նրա հետ նույն վագոնում, ով, վագոնը զբաղեցնող սպեկուլյանտների անհանգիստ ամբոխի մեջ պարզապես զարմացրել էր նրան իր յուրահատուկ անհատականությամբ և հանգստությամբ. կարծես այդ մարդիկ փոքրիկ ճանճեր լինեին նրա համար, և ինքը նրանց դիտում էր անմատչելի բարձունքներից: Ա.-ն կարծել էր, թե նա “նավթի թագավոր” է Բաքուից, և նրա հետ վարած խոսակցության ժամանակ էլ՝ նրա մի քանի առեղծվածային արտահայտությունները առավել էին ուժեղացրել վերջինիս մասին այն կարծիքը, որ այս մարդը, ում միլիոնները ավելանում են, երբ նա քնած է լինում, բարձունքներից է նայում այս անհանգիստ մարդկանց, ովքեր պայքարում են ապրուստ ստեղծելու և գումար աշխատելու համար:

Ինձ հետ ճանապարհորդող անձնավորությունը նույնպես ինքնամփոփ էր. նա պարսիկ էր կամ թաթար, լուռ մարդ թանկարժեք կարակուլի գլխարկը գլխին, ձեռքին էլ ֆրանսիական վեպ կար: Նա թեյ էր խմում՝ զգուշորեն ցած դնելով բաժակը փոքրիկ պատուհանին կից պատվանդանի վրա, որպեսզի թեյը սառչեր. ժամանակ առ ժամանակ նա ծայրահեղ արհամարհանքով նայում էր իրարանցմանը և աղմուկին, որ առաջացրել էին այդ տարօրինակ և ժեստերով խոսող մարդիկ: Եվ նրանք էլ իրենց հերթին էին նայում նրան, և ինձ թվում է՝ համակ ուշադրությամբ, եթե ոչ՝ հարգալից ակնածանքով: Ինձ առավելագույնը հետաքրքրեց այն, որ նա նման էր նույն այն հարավային Արևելքի տիպի մարդկանց, ինչպես սպեկուլյատորների խմբի մյուս մասը, գիշատիչների մի խումբ, որոնք կարծես թոնում էին Ագրիոնյան գոտի՝ խժռելու մեռելոտի կամ նման մի բան. նա թխադեմ էր, սաթ-սև աչքերով և Զելիմ Խանի նման բեղերով... Ինչու՞ էր նա այդքան խոսափում և արհամարհում իր մարմինն ու արյունը: Բայց ի ուրախություն ինձ՝ նա սկսեց խոսել ինձ հետ.

“Իրենք իրենց տանջում են”, - ասեց նա՝ անշարժ ու գունատ դեմքով, մինչդեռ նրա սև, հարգալից աչքերը՝ ինչպես Արևելքում է, թույլ ժպտում էին:

Լռությունից հետո նա շարունակեց.

“Այո, Ռուսաստանում այս պահին բազմաթիվ բիզնեսներ կան, որոնցից խելացի մարդը կարող է շատ փող աշխատել”: Եվ հետո մեկ այլ լռությունից հետո նա շարունակեց.

“Վերջիվերջո, պատերազմ է: Բոլորը ցանկանում են միլիոնատեր դառնալ”:

Նրա ձայնի տոնում, որը հանգիստ էր և սառը, ես նկատեցի ճակատագրական և չժանգոտվող սնապարծություն, որը հասնում էր ջինիզմի. ես մի փոքր կոպիտ հարցրեցի.

“Իսկ դու՞ ք”:

“Ի՞նչ”, - հարցրեց նա:

“Դուք նույնպես դա՞ չեք ուզում”:

Նա պատասխանեց անորոշ և աննկատ հեզմանքով:

Ինձ թվաց, թե նա չի լսել կամ չի հասկացել, և ես կրկնեցի.

“Իսկ դուք շահույթ չունե՞ք”:

Նա մեղմ ժպտաց և հավասարակշռված կերպով պատասխան տվեց.

“Մենք միշտ շահույթ ունենք: Դա մեզ չի վերաբերում: Պատերազմ կա թե չկա՝ դա միանգամայն միևնույնն է մեզ համար: Մենք միշտ շահույթ ունենք”:

(Գ.-ն իհարկե նկատի ուներ էգոթերիկ աշխատանքը՝ “գիտելիքների ձեռքբերում” և մարդկանց շրջանակների մեծացում: Սակայն Ա.-ն հասկացել էր, թե նա խոսում է նավթի մասին:)

Հետաքրքիր կլիներ խոսել և ավելի մոտիկից ծանոթանալ մի մարդու հոգեբանության հետ, ով եկամուտը ամբողջովին կախված է արեզակնային համակարգում երևույթների դասավորվածությունից, ինչը դժվար տխրեցնող լինի, և ում հետաքրքրություններն էլ ճիշտ այդ պատճառով ավելի բարձր են դասվում, քան պատերազմն ու խաղաղությունը:

Այս վերջաբանով էլ Ա.-ն ավարտել էր “նավթի թագավորի” մասին դրվագը:

Մեզ մասնավորապես զարմացրել էր Գ.-ի “ֆրանսիական վեպը”: Կամ Ա.-ն հնարել էր այդ պահը՝ ավելացնելով դա իր իսկ սեփական տպավորություններին կամ էլ Գ.-ն պարզապես ստիպել էր նրան “տեսնել” այդպես, այն է՝ ենթադրենք՝ մի ֆրանսիական վեպ փոքր հատորով և դեղին կազմով կամ միզուցե՝ նույնիսկ ոչ էլ դեղին կազմով, քանի որ Գ.-ն իհարկե ֆրանսերեն չէր կարդում:

Գ.-ի մեկնելուց հետո մինչև հեղափոխություն մենք միայն մի քանի մեկ կամ երկու անգամ լսեցինք նրա մասին Մոսկվայից:

Բոլոր իմ մշակած պլանները վաղուց արդեն խափանվել էին: Ինձ չհաջողվեց տպագրել այն գրքերը, որոնք ես մտադրություն ունեի տպագրել, ինձ չհաջողվեց որևիցե բան պատրաստել արտասահմանյան թողարկումների համար, չնայած որ հենց պատերազմի սկզբից էլ ես հասկացա, որ իմ ամբողջ ստեղծագործական գործունեությունը պետք է տեղափոխվի արտասահման: Վերջին երկու տարիների ընթացքում ես իմ ամբողջ ժամանակը նվիրել եմ Գ.-ի մասին աշխատանքին, նրա խմբերին, այդ աշխատանքի հետ կապված խոսակցություններին, Լենինգրադի ճանապարհորդություններին, և այդպիսով ամբողջովին աչքաթող էի արել իմ իսկ սեփական գործերը:

Միաժամանակ մթնոլորտն ավելի գորշանում էր: Կարելի էր զգալ, որ ինչ-որ բան է լինելու և այն էլ շատ շուտով: Միայն նրանք, ումից որ իրականում կախված էր այս իրադարձությունների շարանը, դեռևս ի վիճակի չէին տեսնել և զգալ դա: Խամաճիկները չէին կարողանում տեսնել այն վտանգը, որը սպառնում էր նրանց և չէին հասկանում, որ հենց այն թելերը, որոնք կառավարում էին թփերում թաքնված դանակով զինված չարագործին, ստիպում էին նրանց շեղվել և այլ կողմ նայել:

Վերջապես հողմը թնդաց: “Մեծ անարյուն հեղափոխությունը” տեղի ունեցավ՝ ամենաանհեթեթ և աղմկարար սուտը, որ երբևիցե հնարավոր էր մտածել: Սակայն այս ամենում ամենայուրահատուկ տեղը զբաղեցնում էր այն փաստը, որ այն մարդիկ, որոնք գտնվում էին այս ամենի հենց կենտրոնում, որտեղ տեղի էր ունենում այս ամենը, հավատում էին այս ստին, և այդ բոլոր սպանությունների առկայության դեպքում էլ կարողանում էին խոսել “անարյուն” հեղափոխության մասին:

Ես հիշում եմ, որ այդ ժամանակ մենք խոսում էինք “տեսությունների ուժի” մասին: Մարդիկ, ովքեր սպասում էին հեղափոխությանը, ովքեր բոլոր իրենց հույսերը կապել էին դրա հետ, և ովքեր դրա մեջ իրենց ազատությունն էին տեսնում ինչ-որ բաներից, չէին կարողանում և չէին ցանկանում տեսնել՝ ինչ էր կատարվում *իրականում*, և միայն տեսնում էին այն, ինչ իրենց կարծիքով պետք է տեղի ունենար:

Երբ ես թռուցիկի մի կողմում տպված տեսա Նիկոլաս II-ի հրաժարականի մասին տպված նորությունը, ես հասկացա, որ սա է այն ամեն ինչի, ինչ տեղի էր ունենում ձգողականության կենտրոնը:

“Իլովայսկին կարող է դուրս գալ գերեզմանից և գրի իր գրքի վերջում. “1917, մարտ՝ Ռուսաստանի պատմության վերջ”, - ասեցի ես ինքս ինձ:

Ես ամենին էլ չէի մտածում դինաստիայի մասին, ես պարզապես չէի ցանկանում ինքս ինձ խաբել, ինչպես շատերն էին անում այդ ժամանակ:

Ես միշտ հետաքրքրված եմ եղել Կայսր Նիկոլաս II-ի անձով. ես նրան համարում էի ականավոր մարդ շատ բաներում, սակայն նա միանգամայն ճիշտ չէր հասկացվել, և չէր հասկացել ինքն իր ես-ը: Այն, որ ես ճիշտ էի, ապացուցված է նրա հուշատետրի վերջում, որը տպագրվել էր բոլշևիկների կողմից և որը վերաբերում էր այն ժամանակահատվածին, երբ նա դավաճանված և լքված էր եղել բոլորի կողմից, որի ընթացքում նա ցուցաբերել է զարմանալի ուժ և նույնիսկ մտքի պայծառություն:

Սակայն այս հարցը ոչ մի կապ չունի նրա հետ՝ որպես անձ, այլ կապված է *ուժի միավորման* սկզբունքի և այս ուժի նկատմամբ իր պատասխանատվության հետ, որը նա ներկայացնում էր ինքն իր մեջ: Ճշմարիտ է, որ այս սկզբունքը ժխտվել է ռուսական ինտելիգենցիայի զգալի մասը: Եվ ժողովրդի համար “ցար” բառը վաղուց արդեն կորցրել էր ամբողջ իր նշանակությունը: Բայց այս բառը դեռ իր մեծ ուժն ու նշանակությունը ուներ բանակի և բյուրոկրատիայի վրա, որը չնայած որ անկատար էր, միննույնն է գործում էր և անեն ինչ համախմբված պահում: “Ցարը” այս համակարգի կենտրոնական անհրաժեշտ մասն էր հանդիսանում: “Ցարի” հրաժարականը այսպիս պահի ի վիճակի էր ոչնչացնել ամբողջ համակարգը: Եվ *մենք այլևս ոչինչ չունեինք*: Հոչակված “հասարակական համագործակցությունը”, որի ստեղծման համար այսքան զոհողություններ էին արվել, ինչպես և սպասելի էր, ապացուցվեց, որ զուտ խաբեություն է: “Ընթացքում” ինչ-որ բան ստեղծելն արդեն անհնար էր: Իրադարձությունները ակնթարթային արագությամբ էին

ընթանում: Բանակը քայքայվեց մի քանի օրում: Պատերազմը իրականում ավելի վաղ էր ավարտվել: Սակայն նոր կառավարությունը ցանկություն չունեի այս փաստը ընդունելու: Նոր, թարմ սուտ հորինվեց: Բայց այս ամենում ամենագարմանահրաշք այն էր, որ մարդիկ միշտ մի բան պետք է գտնեն, որի համար կարող են գոհ լինել: Ես չեմ խոսում այն զինվորների մասին, որոնք դուրս էին բերվել բարակներից կամ գնացքներից, որոնցով պետք է նրանք տարվեին սպանդանոց: Ես ապշած էի մեր “ինտելիգենցիայի” վրա, ովքեր “հայրենասերներից” միանգամից վերածվեցին “հեղափոխականների” և “սոցիալիստների”: Նույնիսկ *Նովայա Վրեսյան* հանկարծ դարձավ սոցիալիստական թերթ: Հայտնի Մենշիկովը մեկ հոդված գրեց “ազատության մասին”, բայց ակնհայտ է, որ նա չէր կարողացել մարսել դա և ձեռք քաշեց դրանից:

Կարծում եմ՝ *հեղափոխությունից* մոտ մեկ շաբաթ անց էր, որ ես հավաքեցի մեր խմբի գլխավոր անդամներին դոկտոր Ս.-ի թաղամասում և ներկայացրեցի նրանց իմ տեսակետները հարաբերությունների վերաբերյալ: Ես ասեցի նրանց, որ իմ կարծիքով բացարձակապես իմաստ չունեի Ռուսաստանում մնալը, և որ մենք պետք է գնանք արտասահման. շատ հավանական է, որ համեմատաբար խաղաղ ժամանակահատվածը շատ կարճ կտևի, մինչև ամեն ինչ կսկի քայքայվել և կործանվել: Մենք չենք կարողանա ոչինչ անել օգնելու համար, և մեր սեփական գործունեությունն էլ անհնարին կդառնա:

Ես չեմ կարող ասել, որ իմ կարծիքը միաբերան ընդունվեց: Նրանցից շատերը չէին գիտակցում իրավիճակի լրջությունը, և նրանց թվում էր, թե հնարավոր է, որ ամեն ինչ դեռ կարող է հանդարտվել և դառնալ սովորական: Մյուսներն այս ամենը ընկալում էին այն սովորական պատրանքի ձևով, որ չկա չարիք առանց բարիքի: Նրանց համար իմ խոսքերը չափազանցություն էին հնչում. ոչ մի իրադարձության համար նրանք շտապողականության կարիք չէին տեսնում: Մյուսների համար էլ հիմնական դժվարությունն այն էր, որ մենք ոչ մի նորություն չունեինք Գ.-ից և ընդհանրապես նրա մասին ոչինչ չէինք լսել արդեն բավականին երկար ժամանակ: Հեղափոխությունից սկսած՝ միայն մեկ նամակ էինք ստացել Մոսկվայից, և դրանից էլ կարելի էր եզրակացնել, որ Գ.-ն հեռացել է, բայց ոչ ոք չգիտեր, թե ուր: Վերջապես մենք որոշեցինք սպասել:

Այդ ժամանակ քառասուն հոգանոց երկու խումբ էր գործում, նաև կային առանձին խմբեր, որոնք անկանոն ընդմիջումներով էին հանդիպում:

Շուտով դոկտոր Ս.-ի տանը կայացած հանդիպումից հետո, ես մի բացիկ ստացա Գ.-ից՝ գրված մոտ մեկ ամիս առաջ գնացքում՝ Մոսկվայից Կովկաս գնալու ճանապարհին, որն այսքան երկար ժամանակ փոստատանը գցած էր եղել՝ տիրող խառնաշփոթության պատճառով: Ակնհայտ էր, որ Գ.-ն Մոսկվայից հեռացել էր դեռ հեղափոխությունից առաջ և ոչինչ չգիտեր իրադարձությունների զարգացման վերաբերյալ, երբ նամակը գրելիս էր եղել: Նա գրում էր, որ պատրաստվում էր գնալ Ալեքսանդրապոլ, ինձ խնդրում էր շարունակել աշխատանքը խմբերի հետ մինչև իր վերադարձը, և խոստացել էր վերադառնալ նախքան Սուրբ Զատիկը:

Այս հողորդակցումը ինձ դժվար դրության առջև կանգնեցրեց: Ես անիմաստ և անհեթեթ էի համարում Ռուսաստանում մնալը: Մյուս կողմից էլ ես չէի ցանկանում հեռանալ առանց Գ.-ի համաձայնության կամ եթե ավելի անկեղծ խոսեմ՝ առանց նրա: Եվ բացի այդ նա մեկնել էր Կովկաս, իսկ նրա բացիկը՝ գրված դեռևս փետրվարին՝ հեղափոխությունից առաջ, ոչ մի կապ չունեի այսօրվա իրավիճակի հետ: Այսպիսով, ես

որոշեցի սպասել՝ չնայած և հասկանալով, որ այն ինչ հնարավոր է թվում այսօր, կարող է վաղն արդեն անհնար դառնալ:

Զատիկ էր, և միևնույնն է դեռ ոչ մի նորություն չկար Գ.-ից: Զատիկից մեկ շաբաթ անց հեռագիր եկավ, որով տեղեկացնում էր, որ կվերադառնա մայիսին: Առաջին “ժամանակավոր իշխանությունն” ավարտվեց: Հիմա արդեն ավելի բարդ էր երկրից դուրս գնալը: Մեր խմբերը դեռ շարունակում էին հանդիպել և սպասել Գ.-ին:

Մեր խոսակցությունները շատ հաճախ անդրադառնում էին “աղյուսակներին”, հատկապես, երբ մենք խոսում էինք խմբի նոր անդամների հետ: Այդ ամբողջ ժամանակ ինձ թվում էր, թե Գ.-ից ստացած այս “աղյուսակներում” շատ բաներ չսսված էին մնացել, և ես հաճախ էի մտածում, որ միգուցե աստիճանաբար՝ “աղյուսակների” ավելի մանրամասն ուսումնասիրության դեպքում, դրանց ներքին իմաստը և նշանակությունը կբացահայտվի մեզ համար:

Մի անգամ, մեկ տարի առաջ արված ինչ-որ գրառումներ թերթելիս՝ այքս կանգ առավ “կոսմոսների” վրա: Ես ավելի վաղ շրջանում գրել էի, որ “կոսմոսները” հատկապես գրավում էին ինձ, քանի որ դրանք ամբողջովին համընկնում էին Մոլորակի Նոր Մոդելի “տարածության ժամանակահատվածների” հետ: Ես նաև նշել եմ այն դժվարությունները, որոնք առաջացան մեզ համար՝ կապված “Միկրոկոսմի” և “Տրիտոկոսմի” տարբեր կերպ ընկալման պատճառով: Բայց մինչ այդ մենք արդեն որոշել էինք ընդունել “մարդուն” որպես “Միկրոկոսմոս” և *երկրի վրա օրգանական կյանքը*՝ որպես “Տրիտոկոսմոս”: Եվ վերջին խոսակցության ժամանակ Գ.-ն լուռ համաձայվել էր այս գաղափարի հետ: Գ.-ի խոսքերը՝ տարբեր տիեզերքներում տարբեր ժամանակների առկայության մասին, չափազանց հետաքրքրում էին ինձ: Եվ ես հիշում էի՝ Փ.-ն ինձ ինչ էր ասել մեր “քնելու և արթնանալու” մասին, ինչպես նաև “օրգանական կյանքի շնչավոր լինելու” մասին: Շատ երկար ժամանակ ես ոչինչ չէի կարողանում քաղել այդ մտքից: Հետո ես հիշեցի Գ.-ի խոսքերը, որ “ժամանակը շնչառություն է”:

“Ի՞նչ է շնչառությունը”, - հարցրեցի ինքս ինձ:

“Երեք վարկյան: Մարդը նորմալ վիճակում շնչում է մոտ քսան լիարժեք շունչ, այն է՝ շնչում և արտաշնչում բոլորով: Համապատասխանաբար՝ լիարժեք շունչը մոտ երեք վարկյան է տևում”:

“Ինչու՞ են ‘քնելն ու արթնանալը’ համարվում ‘օրգանական կյանքի շունչը’: Ի՞նչ է քնել և արթնանալ”:

“Մարդու և նրա հետ համաչափ և նրա նման պայմաններում ապրող բոլոր օրգանիզմների համար, նույնիսկ՝ բույսերի, այս պրոցեսը *քսանչորս ժամ* է: Բացի այդ, քունը և արթուն վիճակը *շունչ* է, օրինակ՝ երբ բույսերը քնած են, այն է՝ գիշերը, դա արտաշնչելն է, և երբ արթուն են, այն է՝ օրվա ընթացքում՝ շնչելն է: Ճիշտ նույն կերպով էլ ինչպես մամոնտների մոտ, այնպես էլ մարդու մոտ մեծ տարբերություն կա թթվածնի և ածխաթթու գազի կլանման մեջ գիշերվա և օրվա ընթացքում՝ քնած և արթուն ժամանակ”:

Դատելով ~~բայց~~ վերոհիշյալից՝ ես դասակարգել եմ շնչելու և քնած ու արթուն լինելու ժամանակահատվածները հետևյալ կերպ.

Միկրոկոսմ

շունչ
քուն և արթուն վիճակ

3 վարկյան
24 ժամ

Տրիտոկոսս շունչ 24 ժամ
 քուն և արթուն վիճակ ?

Ես հանգեցի պարզ “երեքի օրենքին”: Բաժանելով 24 ժամը 3 վարկյանի, ես ստացա 28800: Բաժանելով 28800-ը (գիշերներ և ցերեկներ) 365-ի՝ ես հայտնվեցի մի փոքր ժամանակահատվածում՝ 79 տարի: Սա հետաքրքրեց ինձ: Յոթանասունինը տարի, եթե շարունակենք նախկին տրամաբանությունը, հավասարվում է “օրգանական կյանքի” քնի և արթուն վիճակի ժամանակահատվածին: Սա չի կարող համապատասխանել օրգանական կյանքի որևիցե բանին, որ իմ մտքով կարող էր անցնել, բայց այն ներկայացնում էր մարդու կյանքը:

“Հնարավոր է արդյոք զուգահեռը շարունակել նույն կերպ, - հարցրեցի ես ինքս ինձ: Ես դասավորեցի երևույթները, որոնք ունեի մտքում հետևյալ կերպ.

<i>Միկրոկոսս</i>	<i>Տրիտոկոսս</i>	<i>Մեգոկոսս</i>
Մարդ	Օրգանական կյանք	Երկիր
Շնչառություն	Շնչառություն	
Շնչառություն		
3 վարկյան	24 ժամ	79 տարի
ՕՐ ու Գիշեր	Օր ու գիշեր	
24 ժամ	79 տարի	
Կյանք		
79 տարի	Աղյուսակ 6	

79 տարին ևս ոչ մի դեր չի կարող խաղալ կյանքում: Այդ պատճառով ես բազմապատկեցի 79 տարին 28800-ով և ստացա մի փոքր քիչ, քան երկուս ու կես միլիոն տարի: Բազմապատկելով 2500000 տարին 30000-ով՝ կարճության համար, ես ստացա տասնմեկ նշանոց թիվ՝ 75000000000 տարի: Այս թիվը խորհրդանշում է երկրի վրա կյանքի տևողությունը: Դեռևս այս թվերը տրամաբանական են կարող են լինել. երկուս ու կես միլիոն տարի օրգանական կյանքի համար և յոթանասունհինգ միլիարդ տարի երկրի համար:

“Չնայած գոյություն ունեն կոսմոսներ մարդուց ավելի ցածր աստիճանի վրա, - ասացի ինքս ինձ: Կարելի է փորձել ու հասկանալ, թե ինչ հարաբերության մեջ են սրանք գտնվում”:

Ես որոշեցի քննարկել երկու կոսմոս (աղյուսակի մեջ աջ կողմում) Միկրոկոսսից՝ առաջին հերթին ընդունելով դրանք որպես համեմատաբար երկու մեծ միկրոսկոպիկ բջիջներ, և հետո՝ ամենափոքրերը (թույլատրելի)՝ որպես անտեսանելի բջիջներ:

Բջիջների այդպիսի դասակարգումը երկու կատեգորիաներով չի կարելի ասել, որ գիտության կողմից միանշանակ ընդունելի է: Բայց եթե մենք հաշվի ենք առնում տարածությունները “միկրոաշխարհի” մեջ, այդ դեպքում անընդունելի է չհամարել այն, որ այս աշխարհը բաղկացած է երկու աշխարհներից՝ իրարից այնքան տարբեր, ինչպես

մարդկանց աշխարհին է և համեմատաբար մեծ միկրոօրգանիզմների և բջիջների աշխարհը: Արդյունքում ես ստացա հետևյալ պատկերը.

Փոքր Երկիր	Փոքր		Մեծ	Միկրոկոսմոս		Օրգանական
	բջիջներ	բջիջներ	(Մարդ)	Կյանք		
Շունչ	--	--	3 վրկ.	24 ժամ	79 տարի	
Օր ու Գիշեր	--	3 վրկ.	24 ժամ	79 տարի	2գ մլն.տարի	
Կյանք	3 վրկ.	24 ժամ	79 տարի	2գ մլն.տարի	75 մլրդ. տարի	

Աղյուսակ 7

Սա շատ հետաքրքիր ստացվեց: Բջջի կյանքի տևողությունը կազմեց 24 ժամ: Եվ չնայած անհատական բջիջների կյանքի տևողությունը չի կարող համարվել սահմանված, շատ հետազոտողներ առաջ են քաշել այն փաստը, որ այնպիսի հատուկ բջջի համար՝ ինչպիսին է մարդկային օրգանիզմի բջիջը, կյանքի տևողությունը *մոտավորապես 24 ժամ* է: Բջջի շնչի տևողությունը 3 վարկյան է: Սա ինձ ոչինչ չասեց: Բայց կյանքի ամենափոքր բջջի կյանքի տևողությունը ինձ շատ բան հուշեց, և ամենից առաջ պարզ դարձավ, թե ինչու է այդքան բարդ տեսնել այդ բջիջներին՝ չնայած, որ իրենց չափսի համար դրանք պետք է որ երևան լավ խոշորացույցի օգնությամբ:

Ես շարունակեցի փորձել հասկանալ՝ ինչ կարելի է ստանալ, եթե “շունչը”՝ այն է 3 վարկյան, բաժանվի 30000-ի: Կստացվի վարկյանի մեկ տաս հազարերորդ մասը: Էլեկտրական կայծի և միևնույն ժամանակ *ամենակարճ վիզուալ տպավորության ժամանակահատված*: 30000-ի փոխարեն ես դիտարկեցի 28000, որպեսզի հեշտ լինի հաշվարկել և ավելի պարզ լինի: Ստացվեց, որ չորս ժամանակահատվածներ փոխկապակցված են միմյանց հետ կամ առանձնացած իրարից միևնույն 30000-ի գործակցով՝ ամենակարճ վիզուալ տպավորություն, շունչ կամ շնչելու և արտաշնչելու ժամանակահատված, քնելու և արթուն լինելու ժամանակահատված և կյանքի տևողության միջին ցուցանիշը: Միևնույն ժամանակ այս ժամանակահատվածներից յուրաքանչյուրը արտահայտում է համապատասխան, բայց ավելի ցածր մակարդակի վրա գտնվող ժամանակահատված ավելի բարձր մակարդակի վրա գտնվող կոսմոսում և միաժամանակ համապատասխան ավելի բարձր մակարդակի վրա գտնվող ժամանակահատված ավելի ցածր մակարդակի վրա գտնվող կոսմոսում: Դեռևս առանց որևիցե հետևություններ անելու՝ ես փորձեցի կազմել լիարժեք սխեմա, որպեսզի այդտեղ ցույց տամ բոլոր կոսմոսները, նաև ավելացնեմ ավելի ցածր մակարդակի վրա գտնվողները, որոնցից առաջինը ես անվանեցի “մուլեկուլ” և երկրորդը՝ “Էլեկտրոն”: Այնուհետև նորից գործը պարզեցնելու համար՝ 30000-ը բազմապատկելիս, ես դիտարկեցի մաիյան կլոր թվեր և միայն երկու գործակիցներ՝ 3 և 9՝. օրինակ՝ 2400000-ը ես դիտարկեցի որպես 3000000; 72000000000՝ որպես 90000000000, և 79-ը՝ որպես 80 և այլն:

Արդյունքում ստացա հետևյալ աղյուսակը.

Սկզբում աղյուսակը բավականին մտածելու տեղիք տվեց: Արդյոք այն հնարավորություն էր տալիս ճիշտ և միանշանակ կերպով հասկանալու մի կոսմոսի կապը մյուսի հետ թե չէ. այդ մասին ես դեռ անկարող էի ասել: 30000 գործակիցը շատ մեծ էր թվում: Բայց միևնույն ժամանակ ես հիշեցի, որ մի կոսմոսի հարաբերությունը մյուսին այնպիսին է, ինչպիսին “գրոյի հարաբերությունը անսահամանությանը”: Եվ այդպիսի հարաբերության դեպքում ոչ մի գործակից չէր կարող շատ մեծ համարվել: “Ջրոյի հարաբերությունը անսահամանությանը” արտահայտում էր մագնիտոդների հարաբերությունը տարբեր տարածությունների:

Գ.-ն ասում էր, որ յուրաքանչյուր կոսմոս եռատարածական է ինքն իրենով: Մա նշանակում է, որ դրան հաջորդող կոսմոսը քառա-տարածական է դրա համար, և դրանից ներքև գտնվող կոսմոսը՝ երկ-տարածական: Դրանից վերև գտնվող հաջորդ կոսմոսը՝ հինգ տարածական, և դրանից ավելի ներքև գտնվողը՝ մեկ-տարածական: Մեկ կոսմոսի հարաբերությունը մյուսին արտահայտում է ավելի մեծ կամ փոքր համարով տարածությունների մագնիտոդները: Բայց կարող է գոյություն ունենալ միայն վեց տարածություն կամ եթե հաշվենք նաև զրոն՝ այդ դեպքում՝ յոթ, իսկ այս աղյուսակի միջոցով մենք ստանում ենք տասնմեկ կոսմոսներ: Առաջին հայացքից սա տարօրինակ է թվում, բայց միայն առաջին հայացքից, քանի որ հենց ես հաշվի առա ցանակցած կոսմոսի գոյատևման ժամանակահատվածը դրանից ավելի բարձր կոսմոսների հետ հարաբերության մեջ, ավելի ներքև գտնվող կոսմոսներն անմիջապես անհետացան նույնիսկ նախքան յոթերորդ տարածությանը հասնելը: Օրինակ՝ դիտարկենք *մարդուն արևի* հետ հարաբերության մեջ: Արևը հանդես է գալիս՝ որպես չորրորդ կոսմոս մարդու հետ հարաբերության մեջ՝ դիտարկելով մարդուն որպես առաջին կոսմոս, բայց մարդու երկար կյանքի տևողությունը՝ ութսուն տարին, հավասար էր արևի մեկ էլեկտրական սիգնալի տևողությանը՝ մեկ ամենակարճ հնարավոր վիզուալ տպավորության ժամանակահատվածին:

Ես փորձում էի հիշել այն ամենն, ինչ Գ.-ն ասել էր կոսմոսների մասին:

“Յուրաքանչյուր կոսմոս շնչավոր և խելացի էակ է: Յուրաքանչյուր կոսմոս ծնվում է, ապրում և մահանում: Մի կոսմոսում անհնար է հասկանալ տիեզերքի բոլոր կանոնները, բայց եթե դիտարկենք *երեք կոսմոս* միաժամանակ, դրանք իրենց մեջ պարունակում են տիեզերքի բոլոր օրենքները, իսկ երկու կոսմոս՝ մեկը վերևում, մյուսը՝ ներքևում, ցույց են տալիս այն կոսմոսը, որը գտնվում է դրանց արանքում: Մարդը, իր գիտակցության մեջ տեղափոխվելով ավելի բարձր կոսմոսի մակարդակ, ճիշտ այս փաստի միջոցով, նաև տեղափոխվում է կոսմոսի ավելի ցածր մակարդակ”:

Ես զգում էի, որ այս բառերից յուրաքանչյուրի մեջ թաքնված էր աշխարհի կառուցվածքը հասկանալու բանալին, բայց բանալիներն անչափ շատ էին. ես չգիտեի որից պետք է սկսել:

Ինչպե՞ս պետք է կատարվեր շարժումը մի կոսմոսից մյուսը, և ե՞րբ ու ո՞ր այդ շարժումը պետք է անհետանար: Ի՞նչ հարաբերությամբ պետք է իմ գտած գործակիցները հանդես գային կոսմոսի շարժումների արդեն քիչ թե շատ հաստատված գործակիցների

կողքին, օրինակ՝ երկնային մարմինների շարժման արագությունը, ատոմում էլեկտրոնների շարժման արագությունը, լույսի արագությունը և այլն:

Երբ ես սկսեցի համեմատել տարբեր կոսմոսների շարժումները, ես նկատեցի շատ ապշեցնող հարաբերակցություն, օրինակ՝ երկրի համար, դրա առանցքի շուրջ պտույտի ժամանակահատվածը հավասար էր վարկյանի մեկ հազարերորդ մասին, այն է՝ էլեկտրական կայծի ժամանակահատվածին: Շատ կասկածելի է՝ արդյոք այդ արագության ընթացքում երկիրը կարող էր զգալ իր շրջապտույտը իր առանքի շուրջ, թե՛ ոչ: Եթե մարդը պտույտ կատարեր, պտույտը արևի շուրջ պետք է տներ մոտ վարկյանի մեկ քսանհինգերորդ մասը՝ ակնթարթային լուսանկարի արագություն: Եվ հաշվի առնելով այդ հսկայական տարածությունը, որը երկիրը պետք է հատեր այս ժամանակահատվածում, անխուսափելի եզրակացությունն այն է, որ երկիրը չի կարող գիտակցել ինքն իրեն, ինչպես մենք գիտենք ասպարեզի այս ձևում, բայց պետք է գիտակցի ինքն իրեն՝ որպես *օղակ* կամ որպես՝ *օղակների երկար զսպանակ*: Վերջինը ավելի հավանական է՝ հիմնվելով՝ *ներկան*՝ որպես շնչի ժամանակ՝ սահմանման վրա: Սա անկեղծ ասաց, այն առաջին միտքն էր, որ հղացել էր ինձ մոտ մեկ տարի առաջ՝ կոսմոսների մասին առաջին դասախոսությունից հետո. Գ.-ն ավելացնելով նրան, ինչ արդեն ասել էր, ասաց, որ *ժամանակը շունչն է*: Այդ ժամանակ ես կարծեցի, թե միգուցե նա նկատի ուներ, որ շունչը ժամանակի միավորն է, այսինքն՝ ուղղակի զգացության համար շնչի ժամանակահատվածը զգացվում է որպես *ներկա*: Սկսելով այս մտքից և ենթադրելով, որ մեկի զգացությունը՝ այն է՝ մեկի մարմնի զգացությունը, կապված է ներկայի զգացողության հետ՝ ես եկա այն եզրահանգման, որ երկրագնդի համար ութսուն տարվա մեջ մեկ շնչի զգացողությունը պետք է կապված լինի զսպանակի ութսուն օղակների հետ: Ես ձեռք բերեցի *Տիեզերքի Նոր Մոդելի* բոլոր եզրակացությունների և հետևությունների միանգամայն անսպասելի հաստատում:

Անդրադառնալով ավելի ցածր դիրք գրավող կոսմոսներին, որոնք իմ աղյուսակում մարդուց *ձախ* դիրքն են գրավում, դրանցից առաջինում ես գտա այն բացատրությունը, որը միշտ ինձ համար ամենաառեղծվածայինն ու ամենից անբացատրելին է եղել մեր օրգանիզմի աշխատանքի մեջ՝ օրինակ՝ ապշեցուցիչ արագությունը, որը համարյա ակնթարթային է բոլոր ներքին պրոցեսների մեջ: Ինձ համար նույնիսկ համարյա շառլատանություն էր թվում հոգեբանների կողմից այն, որ ոչ մի առանձնահատուկ կարևորություն չի տրվել այս փաստին: Իհարկե, գիտությունը բացատրում է միայն այն, ինչ կարող է բացատրել: Բայց այս դեպքում, կարծում եմ, այն չպետք է թաքցնի այդ փաստը կամ խուսափի դրանից, այնպես կարծես դա գոյություն չունի, այլ պետք է մշտապես ուշադրություն հրավիրի դրա վրա և ամեն հարմար պահի արձանագրի այն: Այն մարդը, ով հոգեբանական հարցերին ուշադրություն չի դարձնում, չի կարող զարմանալ այն փաստից, որ մեկ գավաթ ուժեղ սուրճ կամ մի բաժակ կոնյակ խմելը կամ ծխախոտի ծուխը ներս քաշելը անմիջապես զգալի է ամբողջ մարմնում, փոխում է ներքին ուժերի փոխհարաբերությունը, ինչպես նաև ռեակցիաների ձևն ու բնույթը, սակայն սա պետք է հայտնի լինի հոգեբանին, որ համարյա այսքան աննկատ ժամանակահատվածում, որը հավասար է մոտ մեկ շունչ քաշելուն, մի ամբողջ շարք բարդ քիմիական և այլ պրոցեսներ են ընթանում օրգանիզմում: Նյութը, որը մուտք է գործում օրգանիզմ, մանրամասնորեն քննվում է. մի փոքր շեղումն անգամ սովորականից, անմիջապես նկատվում է. վերլուծության պրոցեսի ժամանակ այն անցնում է մի շարք լաբորատորիաներով, այն

բաժանվում է մասնիկների և խառնվում այլ նյութերի հետ, և այս խառնուրդի տեսքով էլ այն ավելանում է այն վառելիքին, որը սնուցում է տարբեր ներվային համակարգեր: Այս ամենը պետք է որ բավականին շատ ժամանակ պահանջի: Մեր կյանքի այն վայրկյանները, որոնք պահանջվում են, որպեսզի այս պրոցեսը իրականանա, պարզապես այս ամենը դարձնում են ֆանտաստիկ և գերբնական: Մակայն սրա ֆանտաստիկ կողմը բացահայտվում է այն ժամանակ, երբ մենք գիտակցում ենք, որ մեծ բջիջների համար, որոնք բնականաբար կառավարում են մեր օրգանիզմի կյանքը, մեր այդ մեկ շունչը տևում է ավելի քան *քսանչորդ ժամ*: Քսանչորս ժամվա ընթացքում՝ նույնիսկ այդ ժամանակի կեսը ընկած հատվածում, այն է՝ ութ ժամում (որը հավասար է մեկ վարկյանի), հնարավոր է պատկերացնել այն բոլոր պրոցեսները, որոնք պետք է վերջացած լինեին սովորական ձևով՝ ճիշտ այնպես, ինչպես դրանք ավարտված կլինեին մեծ և լավ սարքավորումներով “քիմիական գործարանում”, որի տրամադրության տակ կան մի շարք լաբորատորիաներ:

Անցում կատարելով ավելի փոքր բջիջների կոսմոսներին, որոնք գտնվում են միկրոսկոպիկ պատկերի սահմանին կամ սահմանից այն կողմ՝ ես նորից հասկացա անբացատրելի բացատրությունը: Օրինակ՝ էպիդեմիկ և ինֆեկցիոն վարակներից համարյա ակնթարթային ինֆեկցիաները՝ հատկապես այն դեպքերը, երբ ինֆեկցիայի պատճառ հանդիսացող աղբյուրը դեռևս հայտնի չի լինում: Եթե երեք վայրկյանը իր տեսակի մեջ փոքր բջջի կյանքի տևողության սահմանն է, և որը հավասար է մարդու երկար կյանքի տևողությանը, այդ դեպքում ի՞նչ կլինի այն արագությունը, որով այս բջիջները բազմապատկվում են, երբ դրանց համար տասնհինգ վայրկյանը հավասարագոր է չորս դարի:

Այնուհետև, անցնելով մոլեկուլների աշխարհ՝ ես նախևառաջ կանգնեցի այն փաստի առաջ, որ մոլեկուլի գոյության կարճությունը համարյա անսպասելի գաղափար է: Սովորաբար ենթադրվում է, որ նույնիսկ կառուցվածքով շատ բարդ մոլեկուլը՝ վերցված՝ որպես հիմնական՝ այսպես ասած՝ աղյուսների ապրող ինտերիեր, որից կառուցվում է շինությունը, գոյատևում է այնքան, ինչքան որ գոյատևում է նյութը: Մենք պարտավոր ենք մի կողմ թողնել այս հաճելի և սփոփիչ միտքը: Մոլեկուլը, որը *ներքուստ կենդանի* է, չի կարող *արտաքինից մահացած* լինել, և կենդանի լինելով հանդերձ՝ այն պետք է, ինչպես բոլոր կենդանի էակները՝ ծնվի, ապրի և մահանա: Դրա կյանքի տևողությունը, որը հավասար է էլեկտրական կայծի արագությանը կամ վայրկյանի մեկ հազարերորդ մասին, չափազանց փոքր է, որպեսզի ուղղակիորեն ազդեցություն գործի մեր պատկերացման վրա: Ինչ-որ համեմատություն, ինչ-որ անալոգիա է պետք անցկացնել՝ հասկանալու համար, թե սա ինչ է նշանակում: Մեր օրգանիզմում մահացող բջիջները և հետո դրանց համալրումը այլ բջիջներով՝ ինչ-որ չափ մոտեցնում է մեզ այս գաղափարին: Անկենդան նյութը, երկաթը, պղինձը, գրանիտը պետք է վերականգնվեն ավելի արագ, քան մեր օրգանիզմը: Իրականում այն փոխվում է ճիշտ մեր իսկ աչքի առաջ: Եթե դու նայես քարին, փակես աչքերդ, և անմիջապես նորից բացես, այն այլևս չի լինի այն նույն քարը, որը դու տեսել էիր. դրանում ոչ մի մոլեկուլ, որը դու տեսել էիր առաջին անգամ, այլևս մնացած չի լինի այլևս: Բայց նույնիսկ այդ ժամանակ դու տեսել ես ոչ թե մոլեկուլներին, այլ դրանց հետքերը: Ես նորից վերադարձա *Տիեզերքի Նոր Մոդելի* գաղափարին: Սա նաև բացատրում է, թե “մենք ինչու չենք կարող տեսնել մոլեկուլներին”, որի մասին ես գրել եմ *Տիեզերքի Նոր Մոդելի* Գլուխ երկուսում:

Վերջին կոսմոսում՝ էլեկտրոնների աշխարհում, ես ճիշտ ամենասկզբից ինձ զգում էի կարծես վեց տարածականության աշխարհում: Մի հարց ծագեց ինձ համար՝ արդյոք տարածությունների հարաբերությունները չեն կարող լուծվել: Էլեկտրոնը՝ որպես եռատարածական մարմին չափազանց անբավարար է: Նախ այն գոյատևում է վայրկյանի մեկ երեք հարյուր միլիոներորդ մասի չափ: Այս ցուցանիշը աննկարագրելիորեն հեռու է մեր հնարավոր երևակայությունից: Համարվում է, որ էլեկտրոնը աստմի մեջ շարժվում է դրա առանցքի շուրջայնպիսի արագությամբ, ինչպիսին է մեկի արագությունը բաժանած տասնհինգ նշանոց թվի վրա: Եվ քանի որ էլեկտրոնի ամբողջ կյանքը վայրկյաններով հավասար է մեկը բաժանած ինը նշանոց թվի, դրանից հետևում է, որ իր կյանքի ընթացքում էլեկտրոնը մի շարք պտույտներ է անում իր “արևի” շուրջ, որը հավասար է վեց նշանոց թվի կամ հաշվի առնելով նաև գործակիցը՝ վեց նշանոց թվի:

Եթե մենք դիտարկենք երկիրը՝ արևի շուրջ իր կատարած պտույտներով, ապա իմ աղյուսակի համաձայն երկրի՝ իր կյանքի տևողության ընթացքում արևի շուրջ կատարած պտույտների քանակը հավասար է տասնմեկ նիշանոց թվի: Առաջին հայացքից թվում է, թե էական տարբերություն կա յոթ և տասնմեկ նիշանոց թվերի միջև, սակայն եթե մենք էլեկտրոնի հետ համեմատենք ոչ թե երկիրը, այլ Նեպտունը, ապա այդ դեպքում տարբերությունը կլինի ակնհայտորեն ավելի քիչ՝ այսինքն՝ տարբերությունը կդիտարկվի արդեն յոթ և ինը նշանոց թվերի միջև, այսինքն՝ չորս նիշի փոխարեն՝ երկու նիշի տարբերություն: Եվ բացի այդ էլեկտրոնի կատարած պտույտի արագությունը աստմի ներսում շատ մոտավոր է: Պետք է հիշել, որ արևի շուրջ մոլորակների պտույտների ժամանակահատվածների տարբերությունները մեր արեգակնային համակարգում ներկայացնում է եռանիշ թիվ, քանի որ Մերկուրին պտտվում է 460 անգամ ավելի արագ, քան Նեպտունը:

Էլեկտրոնի կյանքի հարաբերությունը մեր ընկալմանը հետևյալ տեսքն ունի. մեր ամենից արագ վիզուալ ընկալումը հավասար է 1/10000-րդ վայրկյանի: Էլեկտրոնի գոյությունը հավասար է 1/10000-րդ վայրկյանի 1/30000-րդ մասին, այսինքն՝ մեկ վայրկյանի մեկ երեք հարյուր միլիոներորդ մասին, և այդ ընթացքում այն գործում է յոթ միլիոն պտույտ պրոտոնի շուրջ: Հետևաբար, եթե մենք տեսնեինք էլեկտրոնը՝ որպես ակնթարթ 1/10000-րդ վայրկյանում, մենք չէինք տեսնի էլեկտրոնը բառի ուղիղ իմաստով, այլ կտեսնեինք էլեկտրոնի *հետքը*՝ բաղկացած յոթ միլիոն պտույտներից՝ բազմապատկած երեսուն հազարով. այն է՝ տասներեք նիշանոց օղակներից բաղկացած մի զսպանակ կամ *Տիեզերքի նոր մոդելի* լեզվով եթե արտահայտենք՝ էլեկտրոնի երեսուն հազար կրկնություն անսահմանության մեջ:

Ժամանակը, համաձայն այն աղյուսակի, որը ես կազմեցի, անկասկած արդեն անցել է չորս տարածությունների սահմանները: Եվ ինձ հետաքրքրում էր՝ արդյոք հնարավոր կլինե՞ր այս աղյուսակի վրա կիրառել Մինկովսկիի $\sqrt{-1}ct$ ֆորմուլան, որն արտահայտում է ժամանակը՝ որպես չորրորդ “աշխարհի” գործակից: Մինկովսկիի “աշխարհը” իմ կարծիքով մանրամասնորեն համապատասխանում է կոսմոսներից յուրաքանչյուրին առանձին կերպով: Ես որոշեցի սկսել “էլեկտրոնների աշխարհից”, և t-ն դիտարկել որպես էլեկտրոնի կյանքի տևողություն: Սա համընկնում է *Տիեզերքի Նոր մոդելի* թեորեմներից մեկի հետ. *Ժամանակը կյանք է*: Արդյունքը պետք է ցույց տա այն արագությունը (կիլոմետրերով), որը լույսի արագությունն է էլեկտրոնի կյանքի ընթացքում:

Հաջորդ կոսմոսում սա պետք է լինի այն տարածությունը, որը լույսը անցնում է մոլեկուլի կյանքի ընթացքում, հաջորդում՝ փոքր բջջի կյանքի ընթացքում, հետո՝ մեծ բջջի կյանքի ընթացքում, հետո՝ մարդու կյանքի ընթացքում և այլն... Բոլոր կոսմոսների արդյունքները պետք է ձեռք բերվեն գծային չափերի սիստեմով. այսինքն՝ դրանք պետք է արտահայտվեն կիլոմետրի կոտորակով կամ կիլոմետրերով: Կիլոմետրերի թվի բազմապատկումը $\sqrt{-1}$ -ով, այսինքն՝ մինուս մեկի քառակուսի արմատով, պետք է արտահայտի, որ այստեղ մենք գործ չունենք գծային չափերի հետ, և որ մեր ստացած գործակիցը *Ժամանակի չափումն է*: Մինուսի մեկի քառակուսի արմատի ֆորմուլան, քանի որ այն քանակապես չի փոխում ֆորմուլան, ցույց է տալիս, որ ամբողջ ֆորմուլան պատկանում է այլ տարածության:

Այս ձևով՝ էլեկտրոնների կոսմոսի հարաբերության մեջ, Մինկովսկիի ֆորմուլան հետևյալ տեսքն է ստանում.

$$\sqrt{-1}. \quad 300\ 000 \quad 3,10^{-7}$$

այսինքն՝ մինուս մեկի քառակուսի արմատ, որը պետք է բազմապատկվի 300 000-ով, որը c -ն է կամ լույսի արագությունը, 300 000 կիլոմետր վայրկյանում և 1/300 000 000-րդ վայրկյան, այսինքն՝ էլեկտրոնի կյանքի տևողությունը: Բազմապատկելով 300 000-ը 1/300 000 000-ով կստացվի 1/1000րդ կիլոմետր, որը հավասար է մեկ մետրի: “Մեկ մետրը” ցույց է տալիս այն տարածությունը, որը լույսը անցնում է մեկ էլեկտրոնի կյանքի ընթացում՝ անցնելով վայրկյանում 300 000 կիլոմետր արագությամբ: Մինուս մեկի քառակուսի արմատը, որը հավասար է “մեկ մետրի” ենթադրելի քանակության, ցույց է տալիս մեկ մետրի գծային չափումը այն հարցի պարագայում, որ քննվում է “Ժամանակի չափումը”՝ այսինքն չորրորդ գործակիցը:

Անցում կատարելով “մոլեկուլի աշխարհի”՝ մենք ստանում ենք Մինկովսկիի ֆորմուլան հետևյալ ձևով.

$$\sqrt{-1}. \quad 300\ 000 \quad 1/10\ 000$$

Վայրկյանի մեկ հազարերորդ մասը՝ համաձայն ադյուսակի, մոլեկուլի կյանքի տևողությունն է: Բազմապատկելով 300 000 կիլոմետրը 1/10 000-ով՝ կստացվի 30 կիլոմետր: “Ժամանակը” մոլեկուլների աշխարհում ստացվում է $\sqrt{-1}. 30$. ֆորմուլայի ձևով: Երեսուն կիլոմետրը արտահայտում է այն տարածությունը, որը լույսը անցնում է մոլեկուլի կյանքի ընթացքում կամ 1/10 000-րդ վայրկյանում:

Այնուհետև, “փոքր բջիջների աշխարհում” Մինկովսկիի ֆորմուլան հետևյալ ձևն է ստանում.

$$\begin{aligned} \sqrt{-1}. \quad 300\ 000 \quad 3 \text{ կամ} \\ \sqrt{-1}. \quad 900\ 000 \end{aligned}$$

այսինքն՝ 900 000 կիլոմետրը բազմապատկած մինուս մեկի քառակուսի արմատով: 900 000-ը ներկայացնում է այն տարածությունը, որը լույսը անցնում է մեկ փոքր բջջի կյանքի տևողության ընթացքում. այն է՝ 3 վայրկյանում:

Շարունակելով նման հաշվարկումները մյուս կոսմոսների համար՝ “մեծ բջիջների” համար ես ստացա *տասնմեկ նշանոց թիվ*, որը արտահայտում է այն տարածությունը, որը լույսը անցնում է 24 ժամվա ընթացքում, “Միկրոկոսմի” համար՝ տասնվեց տշանոց թիվ՝ արտահայտող տարածությունը կիլոմետրերով, որը լույսն անցնում է 80 տարում, “Տրիտոկոսմի” համար քսան նիշանոց թիվ, “Մեզոկոսմի” համար՝ քսանհինգ նիշանոց թիվ,

“Դոյտերոկոսմի” համար՝ քսանինը նիշանոց թիվ, “Մակրոկոսմի” համար՝ երեսունչորս նիշանոց, “Այոկոսմի” համար՝ երեսունութ նշանոց, “Պրոտոկոսմի”՝ քառասուներկուս նշանոց թիվ կամ $\sqrt{-1}$. 9. 10⁴¹, այլ կերպ կարելի է ասել, որ “Պրոտոկոսմի” կյանքի ժամանակ լույսի ճառագայթը անցնում է 900 000 000 000 000 000 000 000 000 000 000 000 000 կիլոմետր¹:

Մինկովսկու ֆորմուլայի կիրառումը ժամանակի աղյուսակում՝ ինչպես որ ես եմ այն արել, իմ կարծիքով շատ հստակ կերպով ցույց է տալիս, որ “չորրորդ գործակիցը” կարող է սահմանվել միայն մեկ կոսմոսի համար նույն պահին, որը այնուհետև հանդես է գալիս՝ որպես Մինկովսկիի “քառատարածական աշխարհ”։ Երկու, երեք կամ ավելի կոսմոսներ չեն կարող համարվել “քառատարածական” աշխարհ, և դրանք իրենց նկարագրի համար պահանջում են հինգ կամ վեց գործակիցներ։ Միննույն ժամանակ Մինկովսկիի համառ ֆորմուլան բոլոր կոսմոսների համար ցույց է տալիս մի կոսմոսի չորրորդ գործակցի հարաբերությունը մյուսի չորրորդ գործակցի նկատմամբ։ Եվ այս հարաբերությունը հավասարագոր է երեսուն հազարի, այսինքն՝ ամեն կոսմոսի գլխավոր չորս ժամանակահատվածների միջև հարաբերությունը և մեկ կոսմոսի մեկ ժամանակահատվածի և համապատասխանաբար՝ միննույն կերպ անվանված՝ մեկ այլ կոսմոսի ժամանակահատվածի միջև:

- Էլեկտրոնների աշխարհ
 - Մուլեկուլների աշխարհ
 - Ճոքր բջիջների աշխարհ
 - Մեծ բջիջների աշխարհ
 - Միկրոկոսմ (մարդ)
 - Տրիտոկոսմ (օրգանական կյանք)
 - Մեզոկոսմ (մոլորակներ)
 - Դետերոկոսմ (արև)
 - Մակրոկոսմ (Ծիր Կաթին)
 - Այոկոսմ (բոլոր աշխարհները)
 - Պրոտոկոսմ (Բացարձակը)

Աղյուսակ 9

Մյուս հարցը, որ ինձ հետաքրքրում էր “տարբեր կոսմոսներում ժամանակի աղյուսակի” մեջ՝ ինչպես որ ես այն անվանեցի, կոսմոսների և տարբեր կոսմոսներում ժամանակի հարաբերությունն էր մարդու մարմնի *կենտրոնների* հետ:

Գ.-ն շատ անգամներ խոսել է տարբեր կենտրոնների արագությունների հսկայական տարբերությունների մասին: Վերոհիշյալ իմ փաստարկը օրգանիզմի մերքին աշխատանքի արագության մասին հանգեցրեց ինձ այն գաղափարին, որ այս արագությունը պատկանում է *բնագոյային կենտրոնին*: Ընդունելով սա որպես հիմք՝ ես փորձեցի շարունակությունը գտնել մտածելու կենտրոնից՝ դրա աշխատանքի մասնիկ ընդունելով՝ օրինակ ժամանակը, որը անհրաժեշտ է մեկ լիարժեք գիտակցված ընկալման, այն է՝ արտաքին ազդակի ընկալումը, դասակարգումը և այս տպավորության սահմանումը, և պատասխան ռեակցիա ուղարկելու համար: Այնուհետև, եթե կենտրոնները իրականում կողք կողքի են գտնվում

կոսմոսների հետ հարաբերության մեջ, ապա ճիշտ նույն ժամանակահատվածում բնագոյային կենտրոնը կարող է այդտեղ փոխանցել մոտ 30000 գիտակցված ընկալումներ, էմոցիանալ և սեքսի կենտրոնների միջոցով՝ 30000² գիտակցված ընկալումներ, իսկ մտածելու կենտրոնների միջոցով 30000³ գիտակցված ընկալումներ:

Միաժամանակ, Գ.-ի սահմանած՝ կոսմոսների փոխհարաբերությունների մասին օրենքի համաձայն՝ բնագոյային կենտրոնը՝ գլխի և մտածելու ունակության կենտրոնների հետ հարաբերության դեպքում ներառում է *երկու կոսմոսներ*, այն է՝ երկրորդ Միկրոկոսմերը և Տրիտոկոսմերը: Այնուհետև, բարձր էմոցիոնալ և սեքսի կենտրոնները՝ վերցրած առանձին-առանձին, պետք է ընդգրկեն երրորդ Միկրոկոսմերը և Մեգոկոսմերը: Եվ վերջապես, բարձր մտածելու կենտրոնը պետք է ներառի չորրորդ Միկրոկոսմերը և Դետերոկոսմերը:

Սակայն վերջինս վերաբերում է բարձր զարգացմանը, այնպիսի զարգացմանը, որը հնարավոր չէ ձեռք բերել պատահական կերպով կամ բնական ձևով: Մարդու նորմալ վիճակում սեքսի կենտրոնը հսկայական առավելություն ունի բոլոր մյուս կենտրոնների նկատմամբ՝ արագության տեսանկյունից. այն աշխատում է 30000 անգամ ավելի արագ քան բնագոյային կամ շարժման համար պատասխանատու կենտրոնները և 30000² անգամ ավելի արագ, քան մարդու ինտելեկտուալ կենտրոնը:

Ընդհանուր առմամբ կենտրոնների՝ կոսմոսների հետ հարաբերության մեջ իմ կարծիքով ուսումնասիրության շատ տարբեր հնարավորություններ են ի հայտ եկել:

Հաջորդ երեկույթը, որ գրավեց իմ ուշադրությունը, այն փաստն էր, որ իմ աղյուսակը համընկնում էր “ժամանակի կոսմիկ հաշվարկումների”, եթե այն կարելի է այդպես արտահայտել, որոշ գաղափարների և նույնիսկ գործակիցների հետ, որոնք գոյատևել են Գնոստիկսի հետ և Հնդկաստանում:

Ցերեկը աշխարհի հազար տարին է, իսկ երեսունհինգ բյուր տարիները և աշխարհի կես բյուր տարիները (365000) հավասար են մեկ Լուսնային տարվա:

Այստեղ գործակիցները չեն համընկնում, սակայն հնդկական գրության մեջ շատ դեպքերում համապատասխանությունը անժխտելի է: Նրանք խոսում են “Բրահմայի շնչի”, “Բրահմայի ցերեկների և գիշերների”, “Բրահմայի տարիքի” մասին:

Եթե մենք հաշվի առնենք հնդկական գրության մեջ նշված տարիների գործակիցները, ապա Մահամանվանտարան՝ “Բրահմայի տարիքը” կամ 311 040 000 000 տարիները (տասնհինգ նիշանոց թիվ), համարյա համընկնում է *արևի* (տասնվեց նիշանոց թիվ) գոյության ժամանակահատվածի հետ, իսկ “Բրահմայի ցերեկներն ու գիշերները”՝ 8 640 000 000 (տաս նիշանոց թիվ) համարյա համընկնում է “արևի օրվա և գիշերվա” (տասնմեկ նիշանոց թիվ) հետ:

Եթե մենք հաշվի առնենք կոսմիկ ժամանակի հնդկական պատկերացումները առանց գործակիցների հետ համեմատության մեջ դնելու, այդ դեպքում այլ հետաքրքիր համապատասխանություններ են առաջ գալիս: Այսպիսով, եթե մենք ընդունենք Բրահման՝ որպես Պրոտոկոսմ, այդ դեպքում հետևյալ արտահայտությունը՝ “Բրահման շնչում և արտաշնչում է տիեզերքը” համընկնում է աղյուսակի հետ, քանի որ Բրահմայի շունչը (կամ Պրոտոկոսմը՝ քսան նիշանոց թիվ) համընկնում է Մակրոկոսմերի

կյանքի տևողության հետ, այսինքն՝ մեր տեսանելի տիեզերքի կամ աստղային աշխարհի հետ:

Ես բավականին շատ խոսել էի Ջ.-ի հետ իմ «Ժամանակների աղյուսակի» վերաբերյալ, և մեզ շատ էր հետաքրքրում, թե ինչ էր Գ.-ն ասելու դրա մասին, երբ մենք տեսնեինք նրան:

Ժամանակն անցնում էր: Վերջապես՝ արդեն հուլիսի սկզբներին, ես հեռագիր ստացա Ալեքսանդրապոլից. «Եթե ցանկանում ես հանգստանալ՝ արի այստեղ»: Գ.-ն էր:

Երկու օրից ես հեռացա Պետերբուրգից: Ռուսաստանը «առանց իշխանության» շատ հետքերի տեսարան էր իրենից ներակայացնում: Այնպիսի տպավորություն էր, կարծես ամեն ինչ գոյություն ուներ և ամեն ինչ դեռևս միասնական էր պարզապես իներցիայով: Սակայն գնացքներ դեռևս ըստ չվացուցակի էին շարժվում, և կայարաններում հերթապահները հեռացնում էին առանց տոմսերի խորին վրդովմունք ապրած ուղևորների ամբոխին վագոններից: Ես հինգ օր էր ճամփորդում էի դեպի Թիֆլիս՝ սովորական երեք օրվա փոխարեն:

Գնացքը ժամանեց Թիֆլիս գիշերը: Անհնար էր քաղաք մտնել: Ես ստիպված էի սպասել մինչ լույս կայարանի ճաշարանում: Ամբողջ կայարանը խցկված էր զինվորներով, որոնք իրենց հաշվին վերադարձել էին Կովկասյան ռազմաճակատից: Նրանցից շատերը հարբած էին: Ամբողջ գիշերվա ընթացքում «հանդիպումներ» էին կայանում բուֆետի պատուհանների դիմաց գնտվող տախտակամածի վրա, և որոշակի հարցերի պարզաբանումներ էին տեղի ունենում: Հանդիպումների ժամանակ երեք «ռազմադաշտային դատարանի» հարց էր առաջ եկել, և երեք հոգի սպանվել էր տախտակամածի վրա: Մի հարբած «զինակից», որը հետո հայտնվեց բուֆետում, բացատրեց բոլորիս, որ առաջին մարդը սպանվել էր գողության համար: Երկրորդ սպանվել էր սխալմամբ, քանի որ նրան խառնել էին առաջինի հետ, իսկ երրորդը նույնպես սպանվել էր սխալմամբ, քանի որ նրան էլ շփոթել էին երկրորդի հետ:

Ես ստիպված էի օրս անցկացնել Թիֆլիսում: Ալեքսանդրապոլ մեկնող գնացքը միայն երեկոյան էին շարժվում: Հաջորդ առավոտյան ես արդեն այնտեղ էի: Ես տեսա, թե ինչպես էր Գ.-ն դիմամո մեքենա պատրաստում իր եղբոր համար:

Եվ նորից, ինչպես առաջ, ես ուշադիր գնում էի նրա հրաշալի կարողությունը՝ ադապտացնել ինքն իրեն ցանկացած տեսակի աշխատանքի, ցանկացած տեսակի գործունեության:

Ես հանդիպեցի նրա ընտանիքին՝ նրա հորը և նրա մորը: Նրանք շատ հին և շատ յուրահատուկ մշակույթի մարդիկ էին: Գ.-ի հայրը տեղական հեքիաթների, լեգենդների և ավանդույթների՝ կարելի է ասել «բարդ»-ի սիրահար էր, և նա անգիր գիտեր տեղական դարձվածների միլիոնավոր տարբերակները: Նրանք հույներ էին՝ Փոքր Ասիայից, սակայն լեզուն, որով հաղորդակցվում էին տանը, ինչպես բոլոր մյուսները՝ Ալեքսանդրապոլում, հայերենն էր:

Իմ ժամանման առաջին օրերին Գ.-ն այնքան զբաղված էր, որ ինձ ոչ մի հնարավորություն չընձեռնվեց հարցնել նրան, թե ինչ էր մտածում ընդհանուր իրավիճակի մասին կամ թե ինչ էր մտադրվել անել: Սակայն, երբ վերջապես խոսեցի նրա հետ այս մասին, Գ.-ն ասեց, որ համաձայն չէ ինձ հետ, և իր կարծիքով շուտով ամեն ինչ կհանդարտվի, և մենք կկարողանանք աշխատել Ռուսաստանում: Հետո նա ավելացրեց, որ

ամեն դեպքում ինքը ցանկություն ուներ գնալ Պետերբուրգ և տեսնել Նեվսկին մանրավաճառներով, ովքեր արևածաղկի սերմեր էին վաճառում, որոնց մասին ես էին նրան հայտնել, և այնտեղ տեղում տեսնել՝ ինչն կարելի է անել: Ես լուրջ չէի ընդունում նրա ասածը, քանի որ մինչ այժմ գիտեի նրա խոսելաոճը և սպասում էի, որ դրանից հետո ինչ-որ բան էլ պիտի ասեր:

Չնայած նկատելի լրջությամբ սա ասելուց հետո՝ Գ.-ն միանգամայն տարբեր բան սկսեց ասել դրանից հետո, որ լավ կլիներ գնալ Պարսկաստան կամ նույնիսկ ավելի հեռու, որ ինքը մի տեղ գիտեր Տրանսկովկասյան լեռներում, որտեղ մարդ կարող էր մի քանի տարի ապրել, և ոչ ոք չէր իմանա դրա մասին և այլն:

Ընդհանուր առմամբ ինձ մոտ դեռ կասկածանք որ մնացել, և Պետերբուրգ գնալու ամբողջ ճանապարհին ես հույս ունեի համոզել նրան գնալ արտասահման, եթե սա դեռ հնարավոր էր անել:

Գ.-ն ակնհայտ էր, որ սպասում էր ինչ-որ բանի: Դինամոմեքենան անբասիր աշխատում էր, սակայն մենք դեռ ոչ մի տեղ չէինք շարժվել:

Տանը Գ.-ի մի շատ հետաքրքիր դիմանկար կար, որը ինձ շատ բան էր ասում նրա մասին: Դա Գ.-ի մեծացված նկարն էր, դեռ այն ժամանակվա, երբ նա բավականին երիտասարդ էր՝ սև սերթուկով, և հետ սանրված, գանգուր մազերով:

Նայելով Գ.-ի նկարին՝ ես կասկածի տեղիք չտվող ճշտությամբ կարող էի ասել, թե նա ինչով կարող էր զբաղվել այն պահին, երբ արված էր նկարը՝ չնայած որ Գ.-ն երբեք չէր խոսել դրա մասին: Այս բացահայտումը ինձ շատ հետաքրքիր գաղափարներ տվեց: Բայց քանի որ սա իմ անձնական բացահայտումն էր, թող որ այն մնա գաղտնիք:

Մի քանի անգամ ես փորձեցի խոսել Գ.-ի հետ իմ՝ “տարբեր կոսմոսներում ժամանակների աղյուսակի” վերաբերյալ, սակայն նա մերժում էր տեսական բոլոր խոսակցությունները:

Ինձ Ալեքսանդրապոլը շատ դուր եկավ: Այն շատ առանձնահատուկ և յուրօրինակ բաներ ուներ:

Արտաքնապես քաղաքի հայկական մասը հին եգիպտական կամ հյուսիսային հնդկական քաղաք էր հիշեցնում. տները՝ իրենց հարթ տանիքներով, որոնք ծածկված էին խոտով: Բլուրի վրա, որտեղից երևում էր Արարատ լեռան ձյունածածկ գագաթը, շատ հին հայկական գերեզմանատուն կար: Հայկական եկեղեցեղիներից մեկում Կույս Մարիամի շատ հիասքանչ պատկեր կար: Քաղաքի կենտրոնը ռուսական քաղաք էր հիշեցնում, բայց այնտեղ կար նաև շուկա, որն ամբողջովին արևելյան էր՝ հատկապես պղնձագործների շարքը, որոնք աշխատում էին բաց տաղավարներում: Քաղաքն ուներ նաև հունական մաս՝ արտաքնապես ամենից քիչ հետաքրքիրը, որտեղ և գտնվում էր Գ.-ի տունը, նաև թարթարներ արվարձան լեռնագոգին, որը շատ տեսարժան վայր էր, սակայն համեմատ քաղաքի մյուս մասերին՝ բավականին վտանգավոր վայր էր համարվում:

Ես չգիտեմ, թե այժմ ինչ է մնացել Ալեքսանդրապոլում այդքան իշխանություններից, հանրապետություններից և ֆեդերացիաներից հետո: Կարծում եմ՝ հստակ կարելի է ասել միայն Արարատ լեռան պատկերի մասին:

Ես հազվադեպ էի տեսնում Գ.-ին և հազվադեպ էր ինձ հաջողվում խոսել նրա հետ: Նա բավականին շատ ժամանակ էր անցկացնում իր ծնողների հետ: Ինձ շատ էր դուր գալիս նրա հարաբերությունները իր հոր հետ, որին պետք է յուրահատուկ ուշադրություն դարձնել: Գ.-ի հայրը չնայած ծեր, բայց առնակազմ մարդ էր՝ միջին հասակի, մուշտուկը բերանին և բուխարա գլխարկով: Շատ դժվար էր հավատալ, որ նա ութսուննանց էր: Նա շատ քիչ էր ռուսերեն խոսում: Բայց Գ.-ի հետ նրանք ժամերով խոսում էին, և ինձ դուր էր գալիս նայել, թե Գ.-ն ինչպես էր լսում նրան՝ հաճախակի ծիծաղում, սակայն իրականում մեկ վայրկյանով էլ չէր կտրվում խոսակցության թելը, և ամբողջ ժամանակ աջակցում էր խոսակցությանը հարցերով և մեկնաբանություններով: Ծերուկը ակնհայտ էր, որ հաճույք էր ստանում այս խոսակցություններից, և Գ.-ն նրան էր հատկացնում իր ամբողջ ազատ ժամանակը և ոչ միայն նույնիսկ ամենաչնչին անհամբերություն չէր ցուցաբերում, այլ ընդհակառակը՝ ամբողջ ժամանակ մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում այն ամենին, ինչ ասում էր հայրը: Նույնիսկ եթե սրա մի մասը դերասանություն էր, այն ոչ մի դեպքում ամբողջությամբ դերասանություն լինել չէր կարող, հակառակ դեպքում այս ամենն իմաստ չէր ունենա: Ես շատ հետաքրքրված և տարված էի այս զգացմունքի արտահայտումով՝ Գ.-ի կողմից:

Ընդհանուր ես երկու շաբաթ անցկացրեցի Ալեքսանդրապոլում: Մի առավոտ Գ.-ն ասեց, որ երկու օրից գնալու ենք Պետերբուրգ, և մենք շարժվեցինք:

Թիֆլիսում հանդիպեցինք Գեներալ Ս.-ին, ով մի ժամանակ Պետերբուրգի մեր խմբի անդամ էր, և այնպիսի տպավորություն էր, որ Գ.-ի՝ նրա հետ ունեցած խոսակցությունը, թարմացրեց Գ.-ի պատկերացումները ընդհանուր վիճակի վերաբերյալ, և ստիպեց նրան ինչ-որ կերպ փոխել հետագա պլաններ:

Ես հիշում եմ մի հետաքրքիր խոսակցություն, որ ունեցանք Գ.-ի հետ Թիֆլիսի ճանապարհին՝ Բաքվի և Դերբենտի միջև գտնվող փոքրիկ կայարանում: Մեր գնացքը կանգնած սպասում էր մինչև կանցնեին Կովկասյան ռազմաճակատից եկող “զինակիցներով” լի գնացքները: Շատ շոգ էր՝ կես մղոն բարձր Կասպից ծովի մակարդակից, և մեր շուրջ ոչինչ չկար բացի փայլող կայծքարերից և հեռվում նշմարվող երկու ուխտերի ուրվագծերից:

Ես փորձեցի Գ.-ի հետ խոսել մեր շտապ հետագա աշխատանքի մասին: Ես փորձում էի հասկանալ՝ ինչ էր նա պատրաստվում անել և ինչ էր սպասում մեզնից:

“Իրադարձությունները մեր դեմ են, ասեցի ես: Մինչ այժմ պարզ է արդեն, որ անհնար է այս խառնիճադանճ մթնոլորտում ինչ-որ բան անելը”:

“Միայն հիմա է, որ ինչ-որ բան հնարավոր է, - պատասխանեց Գ.-ն: Եվ իրադարձությունները բացարձակապես մեզ դեմ չեն ուղղված: Դրանք պարզապես շատ արագ են զարգանում: Սա ամբողջ խնդիրը: Բայց սպասի մոտ հինգ տարի և ինքդ կտեսնես, թե ինչ խոչընդոտներ այսօր հետագայում մեզ համար օգտակար կդառնան”:

Ես չհասկացա՝ ինչ նկատի ուներ Գ.-ն: Ոչ հինգ, և ոչ էլ տասնհինգ տարի հետո սա պարզ չդարձավ: Նայելով “փաստերի” տեսանկյունից՝ հնարավոր չէր պատկերացնել, թե ինչը կարող էր մեզ օգնել իրադարձություններից, որոնց բնույթը “քաղաքացիական պատերազմն” էր, “մարդասպանությունը”, համաճարակները, սովը, այն, որ ամբողջ Ռուսաստանը դառնում էր վայրենի, և նաև Եվրոպական քաղաքականության անդադար ստերը և ընդհանուր ճգնաժամը, որը այդ ստերի անխուսափելի արդյունքն էր:

Սակայն, եթե չդիտենք այս ամենը “փաստերի” տեսանկյունից, այլ՝ էզոթերիկ սկզբունքների տեսանկյունից, ապա Գ.-ի ասածը դառնում է ավելի ըմբռնելի:

Ինչո՞ւ այս գաղափարները ավելի շուտ չէին ծագել: Ինչո՞ւ մենք դրա մասին չէինք մտածել, երբ Ռուսաստանը գոյություն ուներ, և երբ Եվրոպան շատ հարամար և հաճելի տեղ էր՝ որպես “արտասահման”: Երևի այստեղ է թաքնված Գ.-ի էնիգմատիկ ակնարկի լուծումը: Երևի այս գաղափարները միայն կարող էին առաջ գալ այնպիսի ժամանակ, երբ մեծամասնության ուշադրությունը սևեռված է այլ ուղղությամբ, և երբ այս գաղափարները կարող են հասու լինել միայն նրանց համար, ում անհրաժեշտ են դրանք: Ես ճիշտ էի “փաստերի” տեսանկյունից: Ոչինչ առավել չէր կարող խոչընդոտ հանդիսանալ մեզ համար, քան “իրադարձությունները”: Միևնույն ժամանակ հնարավոր է, որ այդ “իրադարձություններն” են մեզ համար հնարավոր դարձրել ստանալ այն, ինչ ունեինք:

Իմ հիշողության մեջ ճանապարհին ունեցած մեկ այլ խոսակցություն էլ է մնացել: Մի անգամ, երբ գնացքը շատ երկար կանգնած սպասում էր կայարանում, և մեզ հետ ճամփորդողները քայլում էին տախտակամածի վրա, ես մի հարց տվեցի Գ.-ին, որին ինքս պատասխան չէի կարողանում գտնել: Դա մարդու համար “ես”-ի բաժանումն էր. ինչպե՞ս կարող է մարդ ամրապնդել “ես”-ի զգացումը և ամրապնդել “ես”-ի գործունեությունը:

“Դու ոչինչ չես կարող անել դրա համար, - ասեց Գ.-ն: Մա պետք է լինի քո *բոլոր* ջանքերի արդյունքը (նա շեշտեց ‘բոլոր’ բառը): Օրինակ՝ հենց դու: Մինչ այժմ դու պետք է կարողանայիր քո “ես”-ը այլ կերպ զգալ: Փորձի՛ր հարցնել ինքդ քեզ՝ արդյոք դու զգում ես տարբերություն, թե ոչ”:

Ես փորձեցի “զգալ ինձ” այնպես, ինչպես Գ.-ն էր ասել, բայց պետք է ընդունեմ, որ ոչ մի տարբերություն չզգացի նրանից, թե առաջ ինչպես էի դա զգում:

“Դա դեռ կգա, - ասաց Գ.-ն: Եվ երբ դա լինի, դու կզգաս: Կասկած չկա, որ դա անհնար է: Այն միանգամայն տարբեր զգացում է”:

Ավելի ուշ ես հասկացա՝ ինչի մասին էր նա խոսում, այսինքն՝ թե ինչպիսին էր այդ զգացումը, և ինչպիսի փոփոխություն: Բայց ես սկսեցի սա զգալ միայն այս խոսակցությունից երկու տարի անց:

Թիֆլիսից մեջ ճանապարհորդության երրորդ օրը, երբ գնացքը սպասում էր Մոզդոկում, Գ.-ն ասաց մեզ (մենք չորսով էինք), որ ես մենակ էի գնալու Պետերբուրգ, մինչդեռ ինքը և մյուսները մնալու էին Միներալնի Վոդի-ում և հետո գնալ Կիսլովոդսկ:

“Դու կանգ կառնես Մոսկվայում, հետո կշարունակես ճանապարհը՝ Պետերբուրգ, - հայտնեց նա ինձ, - և ասա նրանց Մոսկվայում և Պետերբուրգում, որ ես նոր աշխատանք եմ սկսում այնտեղ: Նրանք, ովքեր ուզում են աշխատել ինձ հետ, կարող են միանալ: Եվ ես խորհուրդ կտամ քեզ երկար չմնալ այնտեղ”:

Ես բաժանվեցի Գ.-ից և նրան ուղեկցողներից Միներալնի Վոդիում և շարունակեցի ճանապարհս մենակ:

Արդեն պարզ էր, որ իմ՝ արտասահման մեկնելու պլաններից, ոչինչ չէր մնացել: Բայց այս փաստը այլևս չէր անհանգստացնում ինձ: Ես չէի կասկածում, որ մենք պետք է շատ դժվար ժամանակների միջով անցնենք, բայց այժմ դա հազիվ թե նշանակություն ուներ ինձ համար: Ես հասկացա՝ ինչից էի վախենում: Ես չէի վախենում իրական վտանգներից,

ես վախենում էի հիմար քայլեր անելուց, այն է՝ չմեկնելուց ճիշտ ժամանակին, երբ ես գիտեի՝ ինչ կարելի էր ակնկալել: Այժմ, թվում էր, թե իմ վրա դրված ամբողջ պատասխանատվությունը վերցվել էր ինձանից: Ես չէի փոխել իմ կարծիքը. ինչպես առաջ, ես հիմա էլ կարող էի ասել, որ Ռուսաստանում մնալը խելագարություն էր: Սակայն իմ վերաբերմունքը դրա նկատմամբ միանգամայն անտարբեր էր: Դա իմ որոշումը չէր:

Ես ճանապարհորդում էի ինչպես միշտ՝ մենակ՝ առաջին կարգով, և Մոսկվայի մոտ ինձ տուգանեցին, քանի որ իմ ռեզերվացիան մեկ ուղղությամբ էր արված, իսկ տոմսը՝ մեկ այլ: Այլ կերպ ասած՝ ամեն ինչ այնպես էր, ինչպես որ պետք է լիներ: Բայց թերթերը, որոնք ես ձեռք բերեցի ճանապարհին, լի էին նորություններով՝ Պետերբուրգի փողոցների վրա տեղի ունեցած կրակոցների մասին: Հիմա արդեն բոլշևիկներն էին, որ կրակում էին ամբոխների վրա. նրանք իրենց ուժն էին փորձում:

Իրավիճակը այս ժամանակ արդեն սկսում էր ավելի որոշակի դառնալ: Մի կողմից բոլշևիկներն էին, որոնք դեռևս լիարժեք չէին գիտակցում այն հիանալի հաջողությունը, որը սպասում էր նրանց, այլ արդեն սկսում էին զգալ դիմակայելու բացակայությունը և սկսում էին ավելի ու ավելի հանդուգն գործունեություն ծավալել: Մյուս կողմից՝ «երկրորդ ժամանակավոր կառավորությունն» էր՝ շատ լուրջ մարդկանցով համալրված, ովքեր հասկանում էին իրավիճակը փոքր կտրվածքով և մեծ հաշվով ընդհանուր ոչ կարևոր շատախոսություններով և տեսություններով. նաև կային այս ինտելիգենցիան մեծապես ոչնչացված պատերազմից, նաև նախկին կուսակցությունների և զինվորական խմբավորումների մնացորդները: Այս ամենը միասին վերցրած՝ բաժանվում էին երկու խմբի. մեկը՝ նրանք, ովքեր, հաշվի առնելով այս բոլոր փաստերը և բանականությունը, ընդունում էին, որ հնարավոր է խաղաղության բանակցությունների գնալ բոլշևիկների հետ, ովքեր շատ բացահայտ կերպով օգտվում էին սրանից՝ գրավելով դիրքերը՝ մեկը մյուսի հետևից, և երկրորդ խումբը նրանք էին, ովքեր, գիտակցելով համագործակցության անհնարինությունը բոլշևիկների հետ, միննույն ժամանակ միավորված չէին և բացահայտ չէին գործում:

Ժողովուրդը լուռ էր, չնայած միգրացի ամբողջ պատմության ընթացքում ժողովրդի կամքը ցայտուն կերպով արտահայտված չի եղել, և այդ կամքը *կարող էր կանգնեցնել պատերազմը*:

Ո՞վ կկանգնեցներ պատերազմը: Սա էր այդ պահի ամենագլխավոր հարցը: Ժամանակավոր կառավարությանը դա չէր հետաքրքրում: Բնական է, որ դա կախված չէր զինվորական խմբավորումներից: Եվ ուժը այս դեպքում փոխանցվում էր նրան, ով առաջինը արտասաներ «խաղաղություն» բառը: Եվ ինչպես հիմնականում լինում է այսպիսի դեպքերում՝ ճիշտ բառը միշտ գալիս է սխալ կողմից: Բոլշևիկները առաջին ասացին «խաղաղություն»: Առաջին հերթին, քանի որ նրանց համար միանգամայն կարևորություն չունեի, թե իրենք ինչ են ասում: Նրանք ոչ մի նպատակ չունեին պահելու իրենց տված խոստումները, չնայած, որ կարող էին խոստանալ այնքան, ինչքան ցանկանում էին: Սա էր նրանց գլխավոր առավելությունը և գլխավոր ուժը:

Բացի սրանից էլի մի հարց կար: Ոչ այն ժամանակ, ոչ էլ դրանից հետո նրանք չէին կարող լինել ոչ այլ ինչ՝ չնայած իրենց ամբողջ պարծենկոտության և չնայած իրենց ակնհայտ և թաքնված բոլոր ընկերների օգնության: Բայց նրանք կարող էին և նրանք կարող են ոչնչացնել ամեն ինչ՝ ավելի շատ ոչ իրենց գործունեությամբ, այլ ավելի շատ՝ իրենց

գոյություն, որը կողոպտում և դիսինտեգրում էր այն ամենը, ինչ կար նրանց շուրջ: Նրանց այս յուրահասկությունը բացատրում էր նրանց մոտեցող հաղթանակը, և այն ամենը, ինչ կատարվեց դրանից հետո:

Մենք, ովքեր նայում էինք այս ամենին համակարգի տեսանկյունից, տեսնում էինք ոչ միայն այն փաստը, թե ինչ էր կատարվում, այլ նաև այն, թե *ինչպես* էր կատարվում, այն է՝ ինչքան հեշտությամբ է ամեն ինչ դեպի անդունդը գնում և կոտրվում հենց որ նույնիսկ մի փոքր իմպուլս է տրվում դրան:

Ես չմնացի Մոսկվայում, բայց ինձ հաջողվեց տեսնել մի քանի ընկերների՝ մինչ ես կսպասեի երեկոյան գնացքին դեպի Պետերբուրգ, և ես փոխանցեցի նրանց այն, ինչ ասել էր Գ.-ն: Հետո ես մեկնեցի Պետերբուրգ և նույն լուրը փոխանցեցի նաև այնտեղ մեր խմբի անդամներին:

Տասներկու օրվա ընթացքում ես նորից Կովկասում էի: Պյատիգորսկում ես իմացա, որ Գ.-ն չէր ապրում Կիսլովոդսկում, այլ Էսսենտուկիում էր, և երկու ժամվա ընթացքում ես արդեն նրա հետ էի՝ մի փոքրիկ գյուղական վիլայում՝ Պանտելեյմոն փողոցի վրա:

Գ.-ն մանրամասն հարցրեց ինձնից, թե ում եմ տեսել, ինչ է ասել նրանցից յուրաքանչյուրը, ով էր պատրաստվում գալ և ով՝ ոչ, և այլն: Հաջորդ օրը երեք հոգի էլ հետևեցին ինձ Պետերբուրգից, և հետո՝ երկու հոգի էլ և այլն: Արդյունքում, բացի Գ.-ից և ինձանից, հավաքվեցին ընդհանուր առմամբ տասներկու հոգի:

¹ Մակայն համաձայն վերջին գիտական հետևություններին՝ լույսի ճառագայթը անցնում է շրջագծով և մոլորակի շուրջ պտույտ կատարելուց հետո վերադառնում է իր աղբյուրին մոտ 1 000 000 000 լուսային տարի անց: 1 000 000 000 լուսային տարին այս դեպքում արտահայտում է մոլորակի շրջապտույտը՝ չնայած որ տարբեր հետազոտողների կարծիքները մեծապես տարբերվում են միմյանցից, և մոլորակի շրջապտույտին վերաբերող բոլոր գործակիցները ոչ մի կերպ չեն կարող բացատրապես ընդունվել, նույնիսկ եթե ընդունվեն բոլոր կարծիքները, որոնք հանգեցնում են տիեզերքում հարցի ճշտությանը:

Ամեն դեպքում, եթե մենք ընդունենք առաջարկվող միջին գործակիցը, որն առնչվում է մոլորակի շրջապտույտի հետ, այդ դեպքում՝ բաժանելով 9.10²⁸–ը 10⁸–ի, մենք ստանում ենք քսան նիշանոց թիվ, որը ցույց է տալիս՝ քանի անգամ է լույսի ճառագայթը պտտվում մոլորակի շուրջ □Պրոտոկոսմի□ կյանքի տևողության ժամանակ: